



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԻՒՅՐԻՆ - ՄԱՅԻՍ 1937



13^{me} Année - Mai 1937

Խմբագրական

Պրնտիկոսաէի իւրհրդածիւթիւն

Ս. Պ.

Հոգ. կեանք

Ուրիշներուն շահերը

Քրիստոնեան կրնա՞յ ծիսել

Տեսէք Հայրը ինտր սէր շնորհաց մեզի

Յար. Խ Տաճարեան

Շնորհաց ծովէն

Մահաւանդ գէպի կեանք

Եղբարք Բագուպեան

Կենաց ամուսնութիւն

Առատուր եղբ. Տէրտէրեանի անակնկալ մահը

Ա. Ն. Տէր Կարապետեան

Ոճրապատկերներ

Մեր Տէր Յիսուս Քրիստոս

Երջանիկ յոյս

Հաւատացեալին հանգիստը

Վեր. Պետրոս Ա. Ակիւլեան

Պատմական

Մեծ գէմքեր ու գէպքեր...

Գ. Գ. Խոյիկեան

Պատմանաց

Մարտիրոսի ու Ջուստինոսի

Մանկան մը հաւատքը

Տէրը Հաղարամեայ թագաւորութիւնը

Սահակ Շանլեան

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսամերթը Թէեւ Ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Յշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
սննդամեքենա համար, այլ ամենուն, ուստի Յշմարտութեան
ներկայացուցիչն ալ բնականաբար ու եւ յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսամերթը երկու լեզուներով կը հրատարակուի: Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտիի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողմէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ Թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարրեր թղթադրուած եւսմը: Այս պարագան
գիրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու զրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վաշկեն Քրիստոսով:

XXXXXXXXXXXX

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱՃՆԵԳՐՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 60 սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԿԵՐԷՆ** միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման Տոլ. 1. 75
(Դիւրութեան համար travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօզմ կրնայ զրկուիլ):

Թղթակցութիւններ եւ յօդուածներ զրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ խիստ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍՅԱՆԻ աւուրով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

Մանուշակ գրամական տպագրութիւն հասցէէք մանատիւն վրայ չմոռնալ գրելու
H. N. Ghazarossian, (Rédacteur) C. C. No. 182.53 Marseille

Արթնցի՛ր դուն
որ կը յնամաս, ես
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քնդի լոյս պիտի
տայ:
Եփես Է 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛յ վախճանք, որ չըլլայ թէ,
Անոր համագիտոր մանկու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԳ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1937

ԹԻԻ 5



ՊԵՆՏԵԿՈՍՏԷԻ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Սուրբ Հոգին մի մարէք Ա. ԹԵՍ. Ե. 19

Օրհնեալ Պենտեկոստէն մեր առջեւն է: Անոր
մերձեցումը մեր սիրտերը լեցնելու է ցընծու-
թեամբ եւ մանաւանդ անձնաքննիչ ու սրբաբար
երկիւղածութեամբ: Պենտեկոստէն «Հոգեգալստե-
ան» տ նն է եւ Սուրբգրայայտ հինգ գլխաւոր
տօներուն պսակը:

Ա. Սուրբ Հոգին. — Ի յաւիտենից Աստուած է:
(Գործ. Ե. 3,4) զոյակից, վիճակակից եւ նշանա-
բնոյթ Հօր եւ Որդոյ հետ: Անիկա կամք եւ
ինքնայայտ գործունէութիւն ունի: Աստուծոյ
խօսքը մեզի կ'ուսուցանէ թէ Անիկա կ'ստեղծէ,
կը հրամայէ, կը սորվեցնէ, կը յանդիմանէ, կը
մխիթարէ, կ'առաջնորդէ, կ'օգնէ, կը զօրացնէ,
կը սրբէ, կը տրամի, կը հառաչէ, մէկ խօսքով
կը կամի եւ կը գործէ: Հետեւաբար Սբ. Հոգին
աստուածայայտութեան մէկ ձեւը կամ Աստուծ-
մէ բղխող ազդեութիւն մը չէ (ինչպէս կ'ու-
սուցանեն մտապաշտ արդիականները) այլ ամե-
նասուրբ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ մէկ անձը:

Ս. Հոգւոյն շուրջ եղած ոեւէ խորհրդածութիւն
անխուսափելիօրէն մեր ուշադրութիւնը Անոր
տիադասներուն վրայ կը դարձնէ: Յիշաւի այս
ուղղութեամբ ոեւէ սերտողութիւն խիստ շահե-
կան է: Շարունակեալ ուրեմն ըսելով թէ աւելի
քան 25 յատկանշական անուններով եւ տիտղոս-
ներով ինքզինք կը յայտնէ Սուրբ Գրոց մէջ:
Նորքան շահեկան եւ շինարար է Անոր խորհր-
դապատկերները ուսումնասիրելը, որոնք թուով
10էն աւելի են, ինչպէս «Աղանի», «Ջուր», «Կը-
րակ», «Հով», «Իւղ» եւայլն:

Բ. Մի մարէք. — Համարին այս մասը լռելեան
վառուած կանխեղի մը պատկերը կը ներկայա-

ցընէ մեզի: «Սուրբ Հոգին մի մարէք» ասացուած-
քէն հետեւեցնելու չենք թէ ոեւէ մէկը կարող է
Ս. Հոգւոյն անմարելի անձը մարել: Ո՛չ: Այլ, թէ
մէկը կրնայ կամակոր ընդդիմութեամբ Սուրբ
Հոգւոյն օրհնեալ եւ փրկարար ներգործութիւնը
խափանել իր մէջ:

Ա՛րդ, այս խորհրդածութենէն գործնական օրհ-
նութիւններ ձեռք բերելու համար կարեւոր է մե-
զի Ս. Հոգւոյն կենսատու ճրագը մարելու եւ
արձարձելու կարելիութիւնները փնտռել:

1. Ճրագ մը կը մարի ընդհանրապէս փչուելով:
Ս. Հոգին ալ կ'մարի խոտասրտութեան պիղծ
շունչովը: Շնորհաց Հոգին կենաց ջահը բռնած
կը մօտենայ մեր միտքերը լուսաւորելու ճշմար-
տութեամբ եւ մեր սիրտերը համոզելու ապաշ-
խարութեան: Անոր առաջին գործն է յանդիմա-
նել մեղաւորը մեղքի համար եւ զայն առաջնոր-
դել Տէր Յիսուսի: Մեղաւորին կողմէն ընդդիմու-
թիւններ կը պատահին: Այս հոգեւորապէս ճը-
րագը փչելուն կը համապատասխանէ: Սբ. Հոգին
սակարն այնքան ալ շուտ չի յուսահատիր: Աստ-
ուածային երկայնմտութեամբ Ան: կը շարունակէ
իր գործը: Ապա եթէ մեղաւորը հարկադրաբար
շարունակէ յամառ խոտասրտութեամբ պատաս-
խանել փրկութեան կոչերուն, մերժուած եւ նա-
խատուած Սբ. Հոգին կը հեռանայ, «կը մարի»:
Եւ բուն իսկ այս բանին մէջ կը կայանայ դա-
տապարտութիւնը, «որ լոյսը աշխարհ եկաւ ու
մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին»: Կոր-
ծանարար յիմարութիւն: Ա՛րդ, եթէ մահը ան-
զեղջ մեղաւորը ձերբակալէ այս ողբալի վիճա-
կին մէջ, ա՛յ ընդմիշտ կորսուեցաւ անիկա «ա-

առնց ողորմութեան»։ Սուրբ Հոգւոյն դէմ գործւած մեղքը շարունակական խստասրտութիւնն է։ Այս է միակ մեղքը որուն յաւիտեան թողութիւն չկայ։ Ուրեմն ո՛վ անդարձ մեղաւորներ, «այսօր եթէ Անոր ձայնը կը լսէք, ձեր սիրտերը մի խստացնէք», Ս. Հոգին մի մարէք։

2. Ճրագ մը կարելի է մարել օդի յարաբերութիւնը արգիլելով։ Անապաշխարին պէս հաւատացեալն ալ կրնայ Ս. Հոգին մարել Անոր գերիշխան ազատութիւնը կաշկանդելով։ Ամէն հաւատացեալ Ս. Հոգին ունի։ Հեղ մը ոտք դրա՞ւ մեր սրտին մէջ՝ Ս. Հոգին ալ անկաշկանդ ազատութիւնով կ'ուզէ գրաւել մեր ամբողջ էութիւնը։ Ան կը ձգտի գերի բռնել մեր ինքնավար եւ քմահաճ կամքը, այն աստիճան որ ենթական ինքզինքը «Տէրոջը կապեալը» գգայ։ Մեր սիրտը մեկնակէտ բռնելով՝ Ան կը նկրտի տիրանալու մեր հոգեկան, մտաւոր, ֆիզիքական եւ նիւթական բոլոր ուժերուն։ Ամբողջական այս գրաւման նպատակն է ամբողջական սրբագործութիւն եւ ճոխ արդիւնաբերութիւն։ Այս նպատակաւ Ան ջանք կ'ընէ յարաճուն հրդեհի մը պէս ծաւալիլ մեր էութեան բովանդակ սահմանները, փճացնելու համար մեր մէջ ինչ որ խոտելի է եւ մեղանշական, ինչ որ մարմնաւոր է եւ երկրաքարշ։ Եւահա մեր մէջ նոր, այլակերպուած, վսեմացած նրկարագիր մը Երեւան կուգայ։ Ս. Հոգին այսպէս պիտանի եւ ատակ կը զարձնէ անձնատուր հաւատացեալը՝ կենդանի Աստուծոյ ձեռքերուն մէջ որպէս գործիք, գործաւոր եւ գործակից դրուելու։

Բայց հոգեւոր այս բաղձալի վիճակը բունագրաւոր մը չէ, ոչ ալ յանկարծակաւութեամբ մը արդիւնքը. ո՛չ, ալ շարունակական ներգործութեան մը արդիւնքը։ Ս. Հոգին կը ներգործէ, կը յառաջխաղայ, կը գրաւէ, կը սրբագործէ, կը վսեմացնէ, կ'արդիւնաբերէ հաւատացեալին կեանքը, բայց այն չափով միայն որ չափով որ հաւատացեալին մէջ անվերապահ յօժարութիւն եւ թոյլատուութիւն կը գտնէ։ Ս. Հոգին ինքզինքը կը յայտնաբերէ այն աստիճան միայն՝ որ աստիճան որ հաւատացեալը տեղ եւ ազատութիւն կը շնորհէ Անոր։ Այս ըսել է, Ս. Հոգւոյն քու մէջ ըրած իւրաքանչիւր նոր նուաճում՝ ողջունուելու է խանդավառ երախտագիտութեամբ եւ նոր անձնագոհաբերութեամբ։ Հոս է տեղը մէջ բերելու այն գրեւծքը թէ «Ուր Տէրոջը Հոգին կայ, հոն ազատութիւն կայ»։ Սուրբ Հոգին քու անհատական ազատութիւնդ կը յարգէ։ Բայց ճշմարիտ եւ բարձրագոյն օրհնութիւնը քու ազատութեանդ մէջ չի կայանար, այլ այդ ազա-

տութիւնովդ Սուրբ Հոգւոյն անձեռնմխելի ազատութիւնը յարգելուն եւ Անոր բացարձակ գերիշխանութեանը հպատակելուն մէջ կը կայանայ։

Հարկադրաբար Սուրբ Հոգին կը տրամի՝ երբ Իր ներգործութիւնները ընդդիմութեան կը բաղխին մեր մէջ։ Կը վշտանայ՝ երբ նուաճումները դիտումնաւոր արգելքներու կը հանդիպին, կը բարկանայ՝ երբ Իր յառաջխաղացումը կը սահմանափակենք։ Կը նահանջէ՝ երբ Իր հրամանները կ'անպահանջ եւ կ'անհնազանդինք։ Կարճ, Ս. Հոգին կը մարի, երբ Իր ազատութիւնը կը կաշկանդենք եւ Իր Աստուածագոր գերիշխանութիւնը կ'անտեսենք։

Արդ, կ'իյնայ մեզի հաւատացեալներու «առաւել Սուրբ Հոգի Աստուծոյն հնազանդիլ, քան թէ մարդոց» (մեր անձը յատկապէս մէջը հաշուելով)։ Առաւել Ս. Հոգւոյն ներգործութեանը եւ թելադրանքներուն հնազանդիլ՝ քան թէ մեր շահապաշտպան մտքին հաշիւներուն կամ մեր անձնախնդիր զգացումներուն։ Առաւել Սուրբ Հոգւոյն հնազանդիլ՝ քան թէ մեր ինքնակամ ու քմահաճ «ես»ին որ միշտ ջարին դաշնակից է։ Հրնազանդիլ վերջապէս, բայց միայն Սուրբ Հոգին, բայց միշտ յօժարակամ եւ անվերապահ հպատակութեամբ։

Ուրեմն եղբայրներ, «Աստուծոյ Սուրբ Հոգին մի տրամեցնէք, որով դուք կնքուեցաք փրկութեան օրումանը համար»։

3. Ճրագ մը կարելի է մարել նաեւ անհոգութեամբ՝ անոր սպառումին փոխարէն նոր իւր չը լեցնելով։ Սուրբ Հոգին ալ կարելի է մարել գԱյն չարձարծելով կամ մեր հոգեւոր առանձնաշնորհներուն եւ պարտականութիւններուն մէջ անփոյթ ու թերի գտնուելով։

Ուրեմն կարեւոր է մեզի համար — ա. Աղօթել, Բ. Ծառայել, Գ. Ս. Գրոց սերտողութիւն, Դ. Անձնաքննութիւն, Ե. Մէկտեղ ժողովուիլ, Վ. Սիրել։ Ահա օտար միջոցներ եւ սուրբ իւղեր, որոնցմով կարելի է Ս. Հոգին արծարծել։ Անհոգ գտնուիլ ասոնց մէջ կամ թերանալ միոյն կամ միւսին մէջ, պիտի նշանակէր ջահը առանց իւղի ձգել։ Առանց իւղի ջահը կը խաւարի, նոյնպէս ալ մեր հոգեւոր առանձնաշնորհներուն եւ պարտականութիւններուն մէջ շարունակական անհոգութեամբ եւ անհաւատարմութեամբ Սուրբ Հոգին կը մարի։

Արթուն ըլլանք ուրեմն եղբայրներ, «Հոգիով բորբոքինք ու Տէրոջը ծառայենք»։ «Միտքդ կը ձգեմ որ արծարծես Աստուծոյ պարգեւը»։ Ս. Պ.



ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ ՇԱՀԵՐԸ

(ՓԻԼ. Բ. 3, 4)

«Բան մը գրողութիւնով (Անգլ. հերձուածողութիւնով) կամ սնապարծութիւնով մի ընէք»: Առաքեալը հոս երկու խիստ կամակոր ու մոլորեցուցիչ ոգիներ մատնանիշ ընելով՝ կը դատապարտէ զանոնք: Այս ոգիներն են հերձուածողութեան ոգին ու սնապարծութեան ոգին: Շատեր՝ ամէն ճշմարտութիւն մէկդի դնելով՝ բռնուն կերպով կը նուիրուին խմբակի մը շահերուն: Այս իրողութիւնը կը տեսնենք քաղաքական կեանքի մէջ: Մարդիկ ինքզինքնին տաք հակաճառութիւններու եւ հրատապ ճառախօսութիւններու կուտան, գիշեր ու ցորեկ կը պայքարին յաղթանակը տանելու, սակայն յաղթութիւնը շահելէ վերջ թմրութեան եւ անհոգութեան անձնատուր ըլլալով կը մոռնան ու կ'անտեսեն կառավարութեան նուիրական գործը: Այս կարգի անհատներ ոչ թէ մեծ խաշակութեան մը քաջ ասպետները, այլ ընտրական ստորին պայքարի մը մէջ կոռուողներ կը ներկայացնեն: Զնչին բանի մը համար կը բոցավառին, սակայն վրէժխնդիրներու առջեւ սառ կը կտրին: Ոչ թէ ճշմարտութիւն մը շեշտելու, այլ թշնամիի մը յաղթելու նպատակաւ կը կոռին:

Այսպէս է նաեւ քրիստոնէական եկեղեցիին մէջ: Աղանդապաշտութիւնը շատ անգամ կը նըստեցնէ մեր քրիստոնէութիւնը: Հաւատքէն աւելի սրբարանին, չոգիէն աւելի գիրին եւ Աստուծոյ ծնածէն աւելի մարդոց շինածին կարեւորութիւն կը տրուի: Ծառայելու միջոցին իսկ փոխանակ մեր աչքերը մեր վարդապետին վերայ սեւեռելով Անոր գեղեցկութիւնը անդրադարձնելով՝ հաստատացիներու տարբեր խմբակի մէջ կը նայինք, որպէսզի մեր մրցակցութեամբ անոնց յառաջացումը դժուարացնենք: Այո, շատ բաներ հերձուածողութեամբ կ'ըլլան: Նոյնչափ ճշմարիտ է նաեւ թէ շատ մը բաներ ալ «սնապարծութիւնով» կ'ըլլան: Մարդոց ծափահարութիւնը Աստուծոյ ներկայութենէն աւելի հաճելի եւ ընդունելի կը լուի: Մեզի կ'իրացնենք այն փառքը որ միմիայն Անոր կը պատկանի: Փոխանակ Աստուծոյ ծառայելու, մեր անձերուն կը


ծառայենք: Ինծի սարսուռ կը պատճառէ ըսելու թէ՛ Աստուծոյ տեղը զբաւելով ինքզինքնիս վեհափառութեամբ զարդարելով՝ Անոր վերաբերածին կը տիրանանք: Սակայն այսպէս գերիշխանութիւն մը վաղանցիկ, ծանծաղ ու կարճ է: Եկէք խոնարհաբար դիմենք Աստուծոյ բարի Հոգիին, որպէսզի ան մեզ ազատէ այս երկու մահացու ոգիներէն, հերձուածողութեան աւերիչ տենդէն ու միզորոպալի, մեծամիտ սնապարծութենէն:

«Հապա խոնարհութիւնով մէկզմէկ ձեր անձն լաւ սեպեցէք»: Այո, Աստուածային առանձնաշնորհումը յափշտակելու վտանգէն պաշտպանուելու միակ միջոցը խոնարհութիւնն է: Եւ ի՞նչ գեղեցիկ է հոս նկարագրուած այս շնորհքը: «Խոնարհութիւն» թարգմանուած բառը յառաջ կուգայ «գորգեակ» կամ «օթոց» բառէն: Կարծեմ առաքեալին միտքէն շատ պիտի չհեռանամ եթէ բռն թէ՛ անիկա խորհուրդ կուտայ մեզի որ մեր կեանքերը կակուղ գորգեակներուն նման գետինը փռենք՝ քաղցր խորհուրդներով, շնորհալի կարեկցութեամբ, օգնելու եւ ծառայելու պատրաստ՝ որպէսզի յոգնած ու վիրաւոր մարդկային ոտքեր դիրութեամբ ու հանգստութեամբ անցնին կեանքի ճամբայէն. քանզի կեանքի ուղիները յաճախ խիստ խորտ ու բորտ եւ քարոտ են ու պարագաներու սուր ծայրերը սաստկօրէն կը վիրաւորեն շատերուն ոտքերը եւ անոնց համար քալելը անվերջ կսկծանք կը դարձնեն: Քրիստոնէաներուն օրհնեալ առանձնաշնորհութիւնն է շնորհալի ու փափկանկատ կարեկցութեան կակուղ ծածկոցներ սփռել ճամբաներու վրայ, այնպէս ծոխի, որ ճամբորդներ կարենան մեր վրայէն քալելով մոռնալ ճամբուն դժուարութիւնները: Ահա խոնարհամտութեան գաղտնիքը: Ընդհ հակառակն է ամբարտաւանութեան ու հրպարտութեան հոգիին, այն հոգիին որ ուրիշներուն դժուարութիւնները կը բազմապատկէ ու սաստկօրէն կը չափազանցէ ճամբուն տագնապները: Որչափ հակառակ է այս ամէնը բնական մարդուն զգացումներուն ու անոր հետեւած ըսկզբունքներուն: Այն որ զօրաւոր կ'զգայ՝ միշտ պատրաստ է անտարբերութեամբ ու վայրագ ուժով տկարը ջախջախելու: Անոր համար «իրաւունքը զօրաւորինն է» ու ամենէն առաջ հասնողին գործը ամենէն շուտ կը տեսնուի: Իսկ քրիստոնէան լալա եղբօրը ծառայելու է, քանզի անիկա ուրիշները իր անձէն աւելի լաւ կը սեպէ: Հաւատացեալը ուրիշներու տեղ կը բանայ, անոնցմով կը հետաքրքրուի ու կը ջանայ անոնց

ոտքերը հաճութեան ու խաղաղութեան ճամբաներուն առաջնորդել:

«Միայն անձերնուդ շահը մի նայիք, հապա ամէն մէկը իր ընկերինն ալ»: Մեր քրիստոնէական աճումը կրնայ չափուիլ այն համակրութեամբ զոր ցոյց կուտանք ուրիշներու հանդէպ: Ո՛րչափ ընդարձակ է մեր հորիզոնը: Արդեօք իմ համակրութիւնս հովանոցի՞ս տարածութիւնն ունի միայն. միմիայն զի՞ս ծածկելու չափ է: Կամ թէ պարտէզի մը մէջ բացուած վերանի մը նման ընտանիք մը միայն կը հովանաւորէ: Ի՞նչ է մեր համակրութեանց շրջանակը: Գրեզի մը մէջ գտնուած ընդարձակ ծածօք մըն է ուր բոլոր գիւղացիները կրնան ապաստանիլ՝ թէ հրաշագեղ երկնակամար մը, որ իր տակ կ'առնէ բոլոր ազգերը ու ժողովուրդները եւ լեզուները: Կ'ըսեն թէ ծառի մը կեղեւին տակ գտնուած համակերպոն շրջանակները անոր տարիքը ու աճման պատմութիւնը կը ներկայացնեն: Ես ալ բոլորովին վստահ եմ թէ քրիստոնեայի մը հոգւոյն շահագրգռութեանց համակերպոն շրջանակները անոր շնորհքի մէջ աճելուն պատմութիւնը կ'ընեն: Ո՛րչափ ընդարձակ է մեր ազօթքներուն շրջանակը: Քանիներո՞ւն համար շերտեանդօրէն կ'ազօթենք: Մեծաւ մասամբ միայն մեր անձերո՞ւն շահերուն համար կ'աղերսենք թէ դուրս երկարելով ամբողջ ազգի մը կարօտութիւնները կը յիշենք: Մեր ազօթքները մեզի հետ մեծցած են թէ տակաւին մեր մանկութեան մատուցած ազօթքներուն յատկանիշները կը կրեն: Եթէ մէկի մը ազօթքները տարուէ տարի չեն մեծնար, չեն խորանար, հետզհետէ աւելի անձնուրաց չեն ըլլար, անոնց արմատներուն մէջ սխալ մը ըլլալու է: Ինչ որ մեր ազօթքներուն համար կ'ըսենք, նոյնը կրնանք ըսել մեր ծառայութեան համար: Մեր բարեգործութիւնը մինչեւ ո՞ւր կ'երկարի, մինչեւ ո՞ւր կը զգանք մարդկութեան տագնապը: Հեռուէն եկած աղաղակը կը լսենք: Մակեդոնիայէն եկած ձայնը մեր ականջներուն կը հասնի, թէ հեռաւոր երկիրը մեզի համար անձայն երկիր մըն է, որով երբեք չենք շահագրգռուիլ եւ որուն բնաւ չենք ծառայել: Եթէ այս է մեր կացութիւնը, հարկ է որ մեծ նորոգիչը մեր հոգիները նորոգէ, մեր գոցուած զգայարանքները բանայ, մեր կեանքներուն ճամբաներուն վրայէն արգելքները մէկզի ընէ, որպէսզի կարենանք մեր հղբօրը հետ հաղորդակցութիւն մշակել ու արագօրէն մասնակցիլ անոր ցաւերուն եւ ուրախութեանց: Այո, մեր Տէրը շատ լաւ ճամբաներ կը շինէ ու եթէ զմեզ բոլորովին իր ձեռքերուն մէջ դնենք, Անիկա մեր առջեւ պիտի բանայ մեծ հղբօր կեանքին կարօտութիւնները, որոնց երբեք մէկը հասած չէ, որպէսզի ոչ թէ «միայն մեր անձերուն շահը նայինք, հապա մեր ընկերինն ալ»:

ՔՐԻՍՏՈՆԵԱՆ ԿՐՆԱՅ ԾԽԵԼ



Սր մը երիտասարդ մը իր երէցին գալով հարցուց, «Պատուելի, ինծի համար ծխելը մեղք է. կրնամ ես թէ՛ քրիստոնեայ ըլլալ եւ թէ ծխախոտ գործածել»:

«Այդ հարցման պատասխանել դժուար է» ըսաւ երէցը: «Ես կը խորհիմ թէ մէկը կրնայ թէ՛ քրիստոնեայ ըլլալ եւ թէ՛ ծխել, բայց ինչպէս որ Մուտին կը նկարագրէ, կրնայ «աղտոտ քրիստոնեայ» մ'ըլլալ: Սակայն ինչո՞ւ այդ հարցումը կ'ընես»:

«Ուրովհետեւ տարի մը առաջ ես դարձի եկայ եւ ամբողջ կեանքս Քրիստոսի յանձնեցի, բայց այս վերջերս ամէն անգամ որ ծխախոտ գործածեմ, խիղճս զիս անհանգիստ կ'ընէ»:

«Ուրեմն քանի որ քու խիղճդ քեզ անհանգիստ կ'ընէ այդ խնդրոյն համար եւ քեզ կը համոզէ թէ սխալ է, ուստի սխալ եւ մեղք է քեզի համար ծխախոտ գործածել, նոյնիսկ եթէ բոլոր քրիստոնեաները գործածեն» պատասխանեց երէցը:

Ճիշդ այդ տեղ եւ այդ բառերն երիտասարդը իր երէցին խրատին հետեւելով՝ իր այն երկար տարիներու մոլութիւնը Քրիստոսի յանձնեց, ծխախոտը ու սիկարները զրպանէն հանելով նետեց:

Քանի մը բառէ վերջը երէցը ու երիտասարդը ուրիշ եկեղեցիի մը առջեւէն կ'անցնէին: Մեծ բազմութիւն մը դուրս կ'ելլէր այն եկեղեցիէն: Անոնց մէջ էր նաեւ քրիստոնեայ մը որ երկուքին ալ ծանօթ էր: Յիշեալը եկեղեցիէն դուրս ելլելուն պէս սիկար մը ձեռք առնելով սկսաւ ծխել:

«Տեսէք», ըսաւ երիտասարդը, որ ճիշդ քանի մը վայրկեան առաջ զինք գերի վարող մոլութիւնը Տէրոջը յանձնած էր, այդ «երէց եղբայրը կը ծխէ, եթէ ան կրնայ ծխել, ես ինչո՞ւ չկրնամ»:

Երիտասարդը ասոր վրայ թէ երէցէն եւ թէ եկեղեցիէն հեռացաւ ու բոլորովին թողուց իր քրիստոնէական կեանքը:

ՏԵՍԷՔ, ՀԱՅՐԸ ԻՆՏՈՐ ՍԷՐ ՇՆՈՐՀԵՑ ՄԵՋԻ...

Ա. ՅՈՎՀ. Գ. 1

ooo



ՄԱՀՈՒԱՆԷ ԴԵՊԻ ԿԵԱՆՔ

Սէրն՝ որ փնտռեց զիս մութին մէջ,
Սէրն՝ որ գտաւ զիս խեղճ, խեղճ,
Ու զիս տարաւ յոյսին անշէջ,
Այս սէրն երգեմ պիտի անվերջ:

Սէրն անսահման, սէրն աննըման
Զոր Տէրս յայտնեց խաչին վըրան,
Այս սէրն անհուն, սէրն մնայուն,
Պիտի երգեմ ես օրն ի բուն:

Սէրն՝ որ իմ բեռս ինծի վերցուց,
Եւ ինձ տուաւ իր քաղցըր լուծ,
Սէրն՝ որ զիս իմ Հօրս տունն դարձուց,
Իմ Տէրս այսպէս ինձ սէր ցուցուց:

Սէրն անսահման, սէրն աննըման եւլն:

Սէրն՝ որ կըրեց խաչ ինձ համար,
Աքեամբ սըրբեց մեղքս անհամար,
Սէրն՝ որ երբեք զիս թող չի տար,
Այս սէրն երգեմ պիտ դարձ դար:

Սէրն անսահման, սէրն աննըման եւլն:

Սէրն՝ որ վանեց սըրտիս խաւար,
Ծագեց հոգւոյս մէջ լոյս պայծառ,
Սէրն՝ որ իմ սէրս կը պահէ վառ,
Այս սէրն երգեմ պիտ անդադար:

Սէրն անսահման, սէրն աննըման
Զոր Տէրս յայտնեց խաչին վըրան,
Այս սէրն անհուն, սէրն մնայուն
Պիտի երգեմ ես օրն ի բուն:

Նմանողաբար շարադրեց
ՅԱՐ. Խ. ՏՈՄՊԱԼԵԱՆ



Առաջուան օրերը կը յիշեմ, Քու բոլոր գործերուդ վրայ կը մտածեմ, Քու ձեռքերուդ քրտնեղութիւնը վրայ կը խորհիմ: Սուղ. ՃԽԳ. 5:

Անոր համար Քու փութիւնդ մ'ածուրբեմ քու վաղեմութիւնը ու Քու հրաշալի գործերդ պիտի զրուցեմ: Սուղ. ՃԽԵ. 5

Ինչ որ եմ, Տէրոջը շնորհքովն եմ: Իրեն փառք դարեր անվախճան:

Ծնած եմ Սեբաստիա: Ծնողքս աշխարհ գալէս յետոյ փոխադրուած են Մանճըլլը գիւղը: Հոն հայրս խան մը կը բանեցնէր հիւրերու համար իսկ մայրս տան գործերով եւ իր հինգ զաւակներովը կ'զրադէր:

Հայրս թէեւ ուսեալ՝ սակայն գինեմով մէկն էր եւ շատ անգամ արբեցած տուն գալով անագին հարուածներ կուտար խեղճ մօրս առանց պատճառի: Մեր լալը իր քով անօգուտ էր: Օր մը վերջապէս մեզ ձգելով ուրիշ երկիր մը զընաց:

Մայրս հաւատացեալ էր, սորվեցուցած էր մեզի միշտ տան անկիւնները քաշուիլ, ծնրադրել եւ աղօթել Յիսուսի որ մեր նեղութիւնները մեղմացնէ, նաեւ կը ջանար կրթել մեզ լաւագոյն խրատներով ու բարոյական զգայուն պատմութիւններով:

Հօրս բացակայութենէն մայրս ինքզինքը առանձին զգալով Սեբաստիա վերադարձաւ իր մօր, եղբօր եւ երկու քոյրերուն քով: Հոն մայրս զիս դպրոց մը դրաւ: Շատ կը սիրէի զրել ու կարգալը: Կարգիս մէջ առաջիններէն էի: Սակայն այս երկար չտեւեց: Համաշխարհային պատերազմը սկսաւ ու մենք բոլոր ընտանիքով, ազգականներով աքսորուեցանք: Այն ատեն ես հազիւ 8 տարեկան էի, լաւ կը յիշեմ ամէն ինչ որ պատահեցաւ մեզի: Ճանապարհը անտանիլի էր: Խիստ նեղութիւններու մատնուելէ յետոյ ազգականներէս ոմանք ճամբաները մնացին եւ մեռան, իսկ ես եւ մայրս մինչեւ Հէսըճէի մօտակայ վըրանարնակ արաբներուն քով հասանք ու իսպուր կոչուած գետին մէկ եզերքը պահուըտելով արաբներուն քով ընդունուեցանք. քիչ յետոյ մօրմէս ալ զատուեցայ եւ ուրիշ արաբի մը քով

խնամուկեցայ: Անգամ մը մայրս պատահութիւնս ունեցաւ զիս այցելելու եւ իմ նստած տեղս լաւ տեսնելով խիստ ուրախացաւ: Նաեւ արարներուն ապսպրեց որ անոնք ինծի հոգ տանին, յետոյ ինծի դառնալով եւ իր վերաւորուած բազուկները վզիս փաթթելով ըսաւ, «Որդեակս, այսուհետեւ ասոնք են քու ծնողքդ եւ դուն իրենց գաւազը, կտրէ յոյսդ ինծմէ, քանզի իմ կեանքս կը վերջանայ, սակայն մի յուսահատիր, քու տեղդ լաւ է ու երբ մեծնաս, դարձեալ քու հայրենիքդ վերադարձիր»: Այս էր իր վերջին խրատը ինծի, որմէ յետոյ ալ չտեսայ զայն:

Արարները անունս փոխելով Ապտուլլահ դրին, որ Աստուծոյ ծառայ ըսել է: Փառք ըլլայ Անոր որ Աստուծոյ ծառայ եմ: Գործս նախ իրենց կովերը, եզները ու զառներ արածել էր, երբ քիչ մը մեծցաւ զիս ոչխարներու հովիւ ըրին: Խիստ տառապանքներու ենթարկուեցայ եւ չեմ գիտեր թէ ո՞ր մէկ տեսակը յիշեմ. անօթութիւնը, ծարաւութիւնը, մերկութիւնը, աղտոտութիւնը, հիւանդութիւնը, յոգնութիւնը, ցո՛ւրտը, տաքութիւնը, ծեծե՛րը, ցաւե՛րը, վախե՛րը, կշտամբանքնե՛րը, անքուն ըլլա՛լը, անտուն ըլլա՛լը, բոկոտն քալե՛լը, ասոնցմէ ո՞րը շարադրեմ: 18 տարի այսպէս անցուցի: Մայրենի լեզուս, նաեւ զրել ու կարդալը բոլորովին մոռցայ: Այսքան տարիներու միջոցին ոչ թուղթ եւ ոչ մատիտ կրցայ տեսնել. շատ անգամ անունս մատովս հողին վրայ կը գրէի: Քրիստոնէութիւնը մոռնալով իսլամութիւնը ընդունեցի. իրենցմէ աւելի կրօնասէր եղած էի: Շատ կը սիրուէի բոլոր զիս ճանչցողներէն: 30էն աւելի անձնական ոչխարներ ունեցայ, իրենց նման զէնք, թուր, նիզակ, եւայլն կը կրէի եւ կոշտ կոպիտ ընկերներու հետ բոլոր կեանքս վատնեցի ունայնութեամբ, անուս, տգէտ եւ վայրենի արարներուն մէջ:

1932ին սով մը տիրեց մեր երկրին մէջ, այնպէս որ նիհար ոչխարը 2 դահեկանի կը ծախուէր: Ես դեռ այս նեղ օրերուն չհանդիպած էի, որոնք իմ ազատումս ուղեւոր զիս Հալէպ զրկել փափաքած էին, բայց ես չէի յօժարած: Սակայն երբ տեսայ որ իմ ալ գեղեցիկ ոչխարներս կը նիհարնան ու պիտի մեռնին, մաս մը խիստ աժան գնով մը ծախեցի եւ մաս մըն ալ իրենց քով թողելով Հալէպ անցայ Դեկտ. 26, 1932ին, եւ հոն հայրենակիցներ գտնելով 7 ամիս իրենց քով խնամուկեցայ: Բոլոր փափաքս կարդալ սորվիլ էր: Պարոնէ մը ա, բ, գը սորվելէ յետոյ քերական մը առի եւ սկսայ կարդալ սոր-

վիլ: Ուսուցիչներս մանկապարտէզի պատանիներ էին: Այսպէս 7 ամսուան մէջ թէ կարդալ եւ թէ գրել սորվեցայ:

Իսլամութիւնը չէի ուզեր ուրանալ, բայց նոյն ատեն կ'ուզէի հասկնալ թէ ի՞նչ է քրիստոնէութիւնը: Օր մը դրացիի մը տունը մտայ եւ խաչեալ Յիսուսին նկարը տեսնելով, հարցուցի իրեն թէ ի՞նչ է Քրիստոսի օրէնքը ձեզի համար: Ան ալ Աստուածաշունչ մը քանալով ելից. Ի. զուլսը կարդաց: Եւ մինչ ինք այս տասը պատուիրանքները կը կարդար, ես նոյն մեղքերը սըրտիս մէջ գգալով սկսայ տակն ու վրայ ըլլալ: Շատ որոշ գիտէի որ մեղաւոր եմ: Սկսայ եկեղեցի յաճախել. հոն մտնելս առաջին անգամ ըլլալով կարծեցի թէ դրախտը այն էր, եւ մարդոց նայելով ես ալ սկսայ ծոխլ, խաչակնքել, բանիւ մը փսփսալ, առանց հասկնալու թէ անոնք ի՞նչ կ'ընեն կամ ի՞նչ կը գրուեն: Դպիրներուն երգը այնքան հրապուրած էր զիս որ կը ցանկայի ես ալ նոյն խումբին մէջ գտնուիլ: Իսկ Առաջնորդին քարոզը մէյմէկ վա՛յ էր ինծի կարծես: Սիրտս հանգիստ չէր, կ'ուզէի գիտնալ, կ'ուզէի ես ալ բան մը գրուել Աստուծոյ փառքին համար: Մեր բուկին մէջ կը գտնուէր երիտասարդ մը որ ինծի պէս արարներուն մէջէն եկած էր ու կը սիրէր կարդալ Աստուծոյ խօսքէն: Անգամ մը Առաքալոյ դիրքը տուաւ ինծի որ կարդամ: Կարդացի զայն եւ օգտուեցայ անկէ: Յիւրաի ան ինծի լապտեր մը եղաւ ու ես կրցայ չար ընկերներէս զգուշանալ որոնք զիս օր առաջ կորսնցնել կը փափաքէին: Աղօթել չէի գիտեր, Սուրբ Գիրք մը ձեռք ձգելով Սաղմոսներ կը կարդայի. «Հալր մեր որ յերկինս ես» զոց սորվեցայ, սակայն խաղաղութեան տեղ վիշտեր ընդունեցի: Գիշեր մը խիստ անհանգիստ եղայ փորի ցաւէ մը եւ կարծեցի որ պիտի մեռնիմ ու պիտի կորսուիմ յաւիտեան: Բայց քանի որ կը հաւատայի Աստուծոյ թէ Ան կը լսէ, ծուկի գալով սկսայ սա բստերը մըմնջել. — «Ով Տէր, կը խնդրեմ, այս գիշեր հոգիս մի առներ, այլ խընայէ ինծի մի քանի օր եւս տալով որպէսզի բարի ըլլամ: Ամէն»: Քանզի չէի գիտեր որ Ան նոյն վայրկեանին կը ներէ ինձ: Սիրտերը կշռող Տէրը լսեց ինծի ու իմ խնդրածէս աւելի տուաւ: Մի քանի օր վերջ մէկու մը միջոցաւ երկու փառքայրներս գտայ, մին Ամերիկա, իսկ միւսը Գահիրէ եւ անմիջապէս սկսայ իրենց հետ թըղթակցիլ: Անգամ մը Գահիրէ գտնուող մօրաքրոջըս սապէս գրեցի, երբ իր բարի խրատները լե-

Ձեռն դադարիր ցաւերս նման մի գետակ,
Երանի քեզ սիրուն, անմեղ աղաւնի.
Ա՛հ, չի գարթիր կեանքդս փլոււ աւերակ,
Երանի քեզ, սիրուն անմեղ պատանի:
Վա՛յ ձեռքերուս որ չեն կապուեր թելերով,
Եւ վա՛յ բերնիս՝ որ չէ կերեր մի ապտակ...
Ո՛հ, ինչ ընեմ ես մա՛յր... գըրէ՛ ինձ շուտով,
Որ չմեռնիմ ես մեղաւոր, անառակ:

Տակաւին չէի գիտեր թէ ինչ է ապաշխարել: Մօրաքոյրս հաւատացեալ մը ըլլալով՝ իբր պատասխան նամակիս, հետեւեալը կը գրէր, «Տէր Յիսուս բոլոր աշխարհի մեղքը վերցնելու համար եկաւ, խաչուեցաւ ու չարչարուեցաւ. նոյն պէս քեզի համար: Ան պիտի ներէ քեզի, եթէ Անոր գաս: Աստուծոյ վրա՛ իր ոյսը դնողը բընաւ պարագ ու յուսախար չըլլար: Ան միայն կընայ ցոյց տալ ճամբան ու վերցնել բոլոր դժուարութիւնները»: Փա՛ռք Փրկչիս, որ նոյնը ըրաւ, փրկութեան ճամբան ցուցուց ինծի ու վերցուց իմ բոլոր դժուարութիւններս: Կը վկայեմ թէ Տէրը զիս հիւանդութիւնով առաջնորդեց երջանիկ կեանքին. կրկին ու կրկին հիւանդ եղայ: Բժիշկներ ըսին թէ քեզի օգափոխութիւն պէտք է եւ Տէրոջը առաջնորդութեամբ 1933 Օգոստոս 2ին Աթըզ գիւղը զրկուեցայ Action Chrétienne en Orientի միջոցաւ ուրիշ 60է աւելի պատանի եւ երիտասարդներու հետ: Մեր այն տարուայ հայրիկը Միհրան եղբ. Գասարճեանն էր: Եւ երբ կիրակի օր մը մեզ քաղցրութեամբ Փրկչին կը հրաւիրէր, կոտրած սրտով ու դողդոջ ծունկերով ոտքի ելայ մամբռիւն մէջէն եւ զինքն Տէրոջը յանձնեցի ըսելով, «Ով Յիսուս, ես մեղաւոր ու անարժան մէկն եմ: Այսօր Գու վերայովդ կը լսեմ թէ մեղքերու թողութիւն կուտաս: Այս վայրկեանիս Քեզի կը յանձնուիմ, կը խնդրեմ ներէ ինծի: Ամէն»: Զարմանք եւ հիացում... կարծես առաջ ուսերուս վրայ բեռներ դրուած էին ու վերցուեցան: Նոյն վայրկեանին յորդառատ ուրախութիւն մը պատեց զիս. սիրտըս խաղաղութիւնով լեցուեցաւ. հոգիս կը ցընծար, դէմքս կը ժպտէր, զօրութիւն մը կ'զգայի վրաս, մեր շրջակայ խիստ ծառերուն մէջ կը վազէի անմիջապէս ու ծնրադրելով շնորհակալութիւններ կ'ուղղէի առ Աստուած, քանզի գիտէի որ այս շնորհքը Իրմէ էր: Երանի թէ ծառերը խօսէին ու գուք անոնցմէ լսէիք թէ որքան արցունք թափած եմ անոնց թուփերուն տակ. այն օրէն մինչեւ այսօր մեծ օրհնութեամբ օրհնուած եմ Իրմէ: Երբ այն վայրէն վերադարձաւ, Եղբայրութեան ժողովներուն առաջնորդուեցայ: Մէկ



ԱՍՏՈՒՐ ԵՂԲԱՅՐ

ՏԷՐՏԵՐԵԱՆԻ

ԱՆԱԳՆԿԱԼ ՄԱՂԸ

Աստուր եղբայր Տէրադեան, բնիկ Պէյլանցի (Իսկէնտէրուն), ծնած է 1895ին: Իր շատ փոքր հասակէն կը կորսնցնէ հայրը, որ թուրքի մը սեւ գնդակին զրհ կ'երթայ եւ կը զրկուի անոր փափուկ գուրգուրանքէն: Ինքը ինչ մօր անդրանիկը ըլլալուն հինգ հոգինոց ընտանիքին հոգա-

կողմէն հոգիս կը թրթռար, իսկ միւս կողմէն բարիք կը վայելէի ամէն տեսակէտէ: Յետոյ Օրդ. Հետմիկ Պիւլի (Միս Պիւլ) քով A. C. Օ.ի իբր որը խնամուեցայ եւ մինչեւ այսօր իրենց օգնութեան տակ եմ: Աստուծոյ խօսքը իմ ամէն օրուայ կերակուրս է եւ ոտքերուս լոյսը: Առանց անոր չեմ կրնար ապրիլ: 1935 Յունիս 30ին Եղբայրութեան ժողովին մէջ թէ մկրտուեցայ եւ թէ հաղորդութիւն առի Տէրոջմէ առաջնորդուելով: Սակայն մկրտուելէս վերջ սոսկալի փորձութիւններով փորձուեցայ, ինչպէս Յիսուս փորձուեցաւ Սատանայէն, բայց ինքզինքս Ամենահոգրին յանձնելով ազատուեցայ այս դէպքերէն:

Մօտաւորապէս ամիս մը առաջ Ս. Հոգին զիս առաջնորդեց դէպի Հէսըջէ արաբներուն: Այս քայլը նախ դժուար եկաւ ինծի, բայց ուրիշ կերպ չկար, Տէրը կը զրկէր զիս: Մահիճս փուշ ու տատակի փոխուեցաւ, բայց ամէն բան ձգելով Տէրոջը հնազանդեցայ եւ ինչ խօսք որ Տէրը բերանս կը դնէ, ուրիշներուն կը խօսիմ: Ինք թող փառաւորուի իմ պզտիկ վկայութիւնովս:

Եթէ կարենայի պատմել ամէն ինչ որ Տէրը անձիս ըրաւ, կարծեմ թէ մեծ թերթ մըն ալ բաւական պիտի չըլլար: Յաւիտեան ու դարեր աչն-վախճան փառք Անոր սուրբ անուան:

Յիսուսով

Հէսըջէ

ԵՂՈՒԱՐԴ ԲԱՅՈՒՄԵԱՆ

Յ. Գ.

Որքան որ կը վայելեմ, նոյնքան կը փափաքիմ որ դուն ալ վայելես ով ընթերցող: Ճամբորդ եմ եւ ճամբուս պաշարը այս է (Աստուծոյ խօսքը) որ զիս դէպի վեր կը տանի: Եթէ կ'ուզես հետեւիլ Աստուծոյ, ո՛հ, մի ուշանար: ՆՈՅՆ

տարութիւնը կը վերցնէ իր անփորձ ուսերուն վրայ իր մօրը հետ:

Աստուծոյ եղբայր թէեւ շատ դեռատի, բայց իր յաղթ կազմին ու լայն կուրծքին տակ պարտութեամբ գնահատելի ար-



ժանիքը ուշադրութեան առարկայ կը դառնայ Ամերիկացի բարերար միսիոնարի մը, որ զայն կը զրկէ Եղեւսիոյ Ամերիկեան որբանոցը, ուր ինք կը գտնէ հայկական տաքուկ մթնոլորտ մը: Իր մէջ կ'արթննայ նաեւ ուսման մեծ փափաքը: Եղեւսիոյ և Այնթապու դպրոցներու մէջ մեծաքայլ յառաջանալով համալսարան կը դըռուի. հոն

կ'ստանայ իր ուսումը, ուր նաեւ վեր. Ա. Զ. Եղայեանի հոգեշունչ քարոզներէ, առաջնորդուելով իր մատուցած տարիքին կը գտնէ իր անձնական ու միակ Փրկիչը: Բայց այս պայծառ մթնոլորտը շատ կը մթազնի, երբ վրայ կը հասնի «Ապրիլեան» եղեւնը, որ կը թալանէ ու կը յօշոտէ ամէն ինչ, նաեւ Աստուծոյ եղբոր հոգեւոր կեանքը: Նոյն կը միանայ կուսակցական ընկերներու քանիցս անգամ մագապուր մահուանէ ազատուելով ի վերջոյ Այնթապու ինքնապաշտպանութեան օրերուն իր գործօն դերը կատարելէն յետոյ կը մեկնի Պոլիս: Հոն Ամերիկացիներուն քով թարգմանի ու գործակատարի պաշտօն վարելով համայն համակրանքը կը շահի: Հոն կ'ամուսնանայ Պոլսեցի բողոքական ու ազնուական ընտանիքի մը զստեր Օր. Զապէլ Ճգնաւորեանի հետ և քիչ յետոյ կուգայ 1923ին Պ. Այրէս: Հոս նորակազմ եղբայրութեան տաքուկ հօտը նորէն կ'արթննայ իր հոգեւոր քունէն. բայց օտար երկրի մէջ, կեանքի բուռն պայքարը և իր ծրագիրները ձախողեցնող պայմանները զինքը դարձեալ կը մոլորեցնեն: Բայց Տէրը բոլորովին լքած չէր զինքը: Անիկա Աստուծոյ եղբայրը օժտած էր բնածին շատ մեծ ձիրքերով. 1. յաղթանգամ, քաջառողջ, լայն կուրծքով, ամէն պարագայի տակ ուրախ սրտով, ժպտալիմ, Գրիստոսի պատիւ բերող Բ. Կոր. Ը. 23, եռանդուն հաւատացեալ մըն էր: 2. Բնաւորութիւնը պարկեշտ, անկեղծ ու մաքուր նկարագիրով, ամբասիր կենցաղի մը տէր, խոնարհ մանուկի մը պէս ուսանող, նաեւ դիւանագէտ ուսուցանող մըն էր ու խաչեալ Յիսուսը քարոզող անփնէր

վկայ մը: 3. Հեռատես, քաջ դատող, սուր մտքով, լայն մտածող, իրաւունքը ճշմարտութեամբ հետադատող, յանդիմանող բայց ոչ վիրաւորող, անարգող բայց ոչ արհամարհող բիւրեղեայ սրտի մը տէր էր: Ամէնը կը սիրէին զինքը, որովհետեւ ինք գիտէր սիրել: Անոր միակ փափաքն էր ապականած բնաւորութիւնը մաքրագործող ու բարձրացնող յաւիտենական վէմին, ու զաղջ անգոր հաւատացեալը իր եղական Զօրավիգին առաջնորդել...:

Մեր եղբայրը ամենուս, մանաւանդ այս վերջին տարիներուն եղբայրութեան շատ սիրելի դարձած էր: Իր երկրորդ անկումը իրեն շատ մեծ դասեր սորվեցուցած էր և օր ըստ օրէ Տէրոջը հալոցին մէջ իր կղկզանքներէն մաքրուելով Փրկչին պատկերին նմանելու վրայ էր: Կարծես յայտնուած էր իրեն իր մօտալուտ մեկնումը: Իր 42 տարեկան առոյգ հասակին, իր ժամերը համրող ութսունամեայ երէցի մը նման բեմէն կը պազատէր ու վարէն կը խրատէր որ հաւատացեալներ սիրով և միաբանութեամբ ու անպաշխարներ Աստուծոյ հետ հաշտութեամբ կնքուին: Անոր քարոզներուն նիւթն էր միայն Աստուծոյ անպատմելի սէրը:

1937 Յունուար 31 Կիրակին ինք պիտի քարոզէր: Շաբթուայ միջոցին իր ծանօթները ժողովի է հրաւիրած նիւթն իսկ շեշտելով: Բայց չէր երեւակայեր իսկ թէ մի քանի ժամ վերջը մահը զինք պիտի դիմաւորէր: Տէրը այդպէս որոշած էր: Ո՛վ Աստուծոյ իմաստութեան ու զիտութեան անչափելի խորունկութիւնը, ի՞նչ անքննելի են Քու խորհուրդները ու անչափելի են Քու ճանքները: Կիրակին դեռ շա՛տ ուշ, Ուրբաթ ժամը 17ին ինքնաշարժի ծառք բաղխումով մը Աստուծոյ եղբայր գետին կը փոռի անկենդան, առանց բառ մը արտասանելու. շատ սրտաճմլիկ մահով մը կը ննջէ ի Տէր, իր ետեւ թողելով իր սիրելի կիներ 42 և 9 տարեկան երկու հասակի մանչ զաւակները և իրեն շատ սիրած եղբայրութիւնը, խոր սուգի մէջ: Վիրաւորուելուն պէս ոստիկանութիւնը իսկոյն ինքնաշարժով պետական հիւանդանոց բժշկանքու դարձանով կը յանձնէ, բայց իզո՛ր, որովհետեւ արդէն անբուժելի էր դարձած: Երկար բարակ հարցաքննութեանէ յետոյ արիւնթաթախ մարմինը փոխադրեցինք իր տունը:

Կիր. առաւօտ ժամը 14ին արդէն յուղարկաւորութեան համար պատրաստ էր հոծ բազմութիւն մը, ուրկէ ալ հետեւեցաւ զէպի գերիզմանատուն: Թաղման արարողութիւնը կատարուե-



Ս. ԳՐԱԿԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻԻՆ

Քաղեց՝ SCOFFIELD Էն

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՄԵՐ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

— 00 —

Սբ. Գրքին մէջ Քրիստոսի օրինակ եղող ան-
ձերէն յիշենք զեռ Մովսէսը, Յեսուսն եւ Գաւթի-
Թապաւորը:

1. Մովսէս. — Ելից Բ. 2: Մովսէս Քրիստոսի
օրինակն է իբր Ազատարար (Եսայ. ԿԱ. 1, Ղուկ.
Գ. 18, Բ. Կոր. Ա. 10, Ա. Թեա. Ա. 10):

ա. Աստուծոյ ընտրուած ազատարար մը (Ե-
Գ. 7-10, Գ. Առաք. Է. 23, Յովհ. Գ. 16):

ցաւ երկու քարոզիչներու կողմանէ: 1. Հրանդ եղ-
բայր Ապաճեան Ղուկ. ԺԶ. 19-31 նիւթ ունենա-
լով Մեծատան ու Ղազարոսի մահը: Մեր պերճա-
խօս եղբայրը շատ զօրաւոր ու ազդուօրէն շեշ-
տեց երկնային փառքի ու զօրութեան տանջան-
քի զոյլութեան վրայ ու նաեւ մահուան վերջ
փրկութեան անկարելիութիւնը: 2. Հայ Աւետ.
եկեղեցւոյ հովիւ Պատ. Նշան Տէր Խորէնեան
նիւթ առնելով Ա. Կոր. ԺԵ. 51-57ը, յատկօրէն
փաստեց թէ եթէ բնական աշխարհի մէջ ունէ
կերպով մը հիւլէ մը իսկ չփճանար, հապա որ-
քան աւելի Աստուծոյ կերպարանքին համեմատ
ստեղծուած ժարդ անուն յաւիտեանական էակը
վերջանա՞յ զերեզմանով, ո՞չ, ալ աւելի անդին
կ'սկսի: Հոս արդարութեան ու ճշմարտութեան
հետեւողներ փառաց ի փառս պիտի փոխուին Յի-
սուսի միանալովը յաւիտեան ապրելու ու շա-
տեր իրենց զործերուն փոխարէն յաւիտեանս
պիտի տանջուին:

Ասատուր եղբայր ինչպէս իր կեանքովը, նոյ-
պէս իր մահովը խօսեցաւ շատերուն: Մի քա-
նի օր վերջ ազօթաժողովին երկու հոգի վկա-
յեցին թէ Ասատուր եղբոր մահը եւ Ապաճեան
եղբոր միջոցով արուած Աստուծոյ խօսքը իրենց
փրկութեան պատճառ է եղած: Թէպէտ ինք մե-
ղաւ, բայց տակաւին կը խօսի իր անմոռանա-
լի յիշատարներով:

«Երանելի եմ անոնք որ Տէրոջմով կը ննջեն»:
Պ. Այրւս ԱՐԱՄ Ն. ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Բ. Իսրայէլէ մերժուելով հեթանոսաց կ'երթայ
(Ելից Բ. 11-13, Գ. Առաք. Է. 25, ԺԸ. 5, 6, ԻԸ. 17-28):

Գ. Իր մերժուած միջոցին հեթանոս հարս մը
կ'առնէ (Ելից Բ. 16-21, Մատթ. ԺԲ. 14-21, Բ. Կոր.
ԺԱ. 2, Եփես. Ե. 30-32):

Դ. Յետոյ երեւան կուգայ իբր Իսրայէլի ա-
զատարարը եւ անոնցմէ կ'ընդունուի (Ելից Գ. 29-
31, Հոով. ԺԱ. 24-26, Գ. Առաք. ԺԵ. 14-17):

Ե. Պաշտօնապէս Մովսէս Քրիստոսի օրինակն
է իբր — մարգարէ (Գ. Առաք. Գ. 22, 23), բարե-
խօս (Ելից ԼԲ. 31-35, Ա. Յովհ. Բ. 1, 2) մրցնորդ
(Ելից ԺԷ. 1-6, Եբր. Է. 23) եւ առաջնորդ կամ
Թապաւոր (Բ. Օր. ԼԳ. 4, 5, Եսայ. ԾԵ. 4, Եբր. Բ.
10): Իսկ Աստուծոյ տանը տեսակէտէն Մովսէս
Քրիստոսի հակապատկերն է: Մովսէս հաւատա-
րիմ էր իբր ուրիշի մը տանը վրայ ծառայ, իսկ
Քրիստոս իբր Որդի մը բուն Իր տանը վրայ
(Եբր. Գ. 5, 6):

2. Յեսուս. — (Յես. Ա. 4): Յեսու անունը կը նը-
շանակէ եհովա. փրկիչ: Յեսու Քրիստոսի օրինակն
է իբր Անոր մեր «փրկութեան Առաջնորդը» (Եբր.
Բ. 10, 11): Դիտաւոր նմանութիւնները հետեւեալ-
ներն են. — ա. Յիսուս ալ Մովսէսէ յետոյ կու-
գայ (Յովհ. Ա. 17, Հոով. Ը. 3, 4, Ժ. 4, 5, Եբր. Է.
18, 19, Դադ. Գ. 25-25): Բ. Յաղթութեան կ'առաջ-
նորդէ (Հոով. Ը. 37, Բ. Կոր. Ա. 10, Բ. 14): Գ. Նա
մեր բարեխօսն է իբր յաղթունք (Յես. Է. 5-9,
Ա. Յովհ. Բ. 1): Դ. Մեր բաժինները (Ժառանգու-
թիւն, բաժին) կ'որոշէ (Եփես. Ա. 11, 14, Գ. 8-11):

3. Գաւթի. — (Ա. Մնաց. ԺԷ. 7): Դաւթի հոս,
ինչպէս յաճախ, օրինակ է իր մարմնի կողմանէ
Որդւոյն, Յիսուսի, Հովիւ-Թապաւորին (Մատթ.
Ա. 1, Հոով. Ա. 3): Իր առաջին գալստեան Նա հո-
վիւի տեղը բռնեց, նախ մահուան մէջ (Յովհ. Ժ.
11) եւ հիմա յարութեան զօրութիւնով (Եբր. ԺԳ.
20): Իր երկրորդ գալստեան Նա «Իսրայէլի վրայ
Իշխան» պիտի ըլլայ (Եսայ. ԺԱ. 10-12, Երեմ.
ԻԳ. 5-8, Ղուկ. Ա. 32, 33, Գ. Առաք. ԺԵ. 14-17):
Այս է ճշգրիտ կարգը ԻԲ. ԻԳ. ԻԴ. Սաղմոսներուն:
Առաջինին մէջ Բաւի Հովիւը իր կեանքը ոչխար-
ներուն համար կը դնէ, երկրորդին մէջ Նա իր
ոչխարներուն հոգ կը տանի, երրորդին մէջ Նա
կուգայ Թապաւորելու իբր փառաց Թապաւոր:

Յովսէփ եւ Բենիամին եւս թէեւ անուղղակի-
օրէն եւ առանց Նոր Կտակարանին միջ նմանու-
թեան ակնարկութիւնը ըլլալու Յիսուսի օրի-
նակները կրնան սկստել, սակայն հոս զանց կ'ը-
նենք անոնց վրայ խօսիլ:

Իսկ իբր Քրիստոսի օրինակը եղող զէպք՝
պէտք է անպատճառ յիշել Եգիպտոսէ ելլելու

առթիւ ըրած «Տէրոջը Զատիկը» (Ելից ԺԲ. 11): Այս գատիկը օրինակն է Քրիստոսի իբր մեր ազատագրողը (Ելից ԺԲ. 1-28, Յովհ. Ա. 29, Ա. Կոր. Ե. 6, 7, Ա. Պետ. Ա. 18, 19):

ա. Գառնուկը պէտք էր անարպտ ըլլալ, եւ ասիկա փաստելու համար ան չորս օր կը պահուէր (Ելից ԺԲ. 5, 6): Այսպէս ալ մեր Տէրոջ հանրային կեանքը Անոր թշնամիներուն հակառակութեան քննադատութեան տակ փորձուեցաւ եւ Անոր սրբութիւնը փաստուեցաւ (Ղուկ. ԺԱ. 53, 54, Յովհ. Ը. 46, ԺԸ. 38):

բ. Այսպէս փորձուած գառնուկը պէտք է մորթուի (Ելից ԺԲ. 6, Յովհ. ԺԲ. 24, Եբր. Թ. 22):

գ. Արիւնը պէտք է իւրացուի, օգտագործուի (Ելից ԺԲ. 7): Այս կը համապատասխանէ անհատական հաւատքով փրկութիւնը իւրացնելու անհրաժեշտութիւնը եւ տիեզերականութեան վարդապետութիւնը կը հերքէ (Յովհ. Գ. 36):

դ. Երբ առանց ուրիշ բանի մը աւելցնելուն միայն արիւնը կը կիրարկուէր, ան կը դառնար դատաստանէ կատարեալ պաշտպանող մը (Ելից ԺԲ. 13, Ա. Յովհ. Ա. 7, Եբր. Ժ. 10, 14):

ե. Զատիկուայ ընթրիքը կը պատկերացնէր Քրիստոս կենաց հացը, եւ կը համապատասխանէր հաղորդութեան (Մատթ. ԻԶ. 26-28, Ա. Կոր. ԺԱ. 23-26): Զատիկուայ ընթրիքին մասնակցիլ պարտականութիւն իւր մը եւ առանձնաշնորհով մըն էր բայց ոչ ապահովութեան պայման մը: Խիստ կարեւոր է նկատի առնել թէ Իսրայէլացիները թէեւ զեռ հացը (բաղարջ) չէին կերած այն զիւշերը երբ Սատակիչը Եգիպտացւոց առջինեկներուն վրայ դատաստանի կոտորածը կը կատարէր, բայց եւ այնպէս իրենց առջինեկները ազատեցան: Ուրեմն դատաստանէն եւ մահէն փրկուելի գառնի արիւնովը կ'ըլլար եւ փրկուելէն յաջորդ օրերուն փրկուածները կուտէին անխմոր հացը, օրինակ Քրիստոսի կենաց հացին (Ելից ԺԲ. 34-39):

Քրիստոսի օրինակները սերտելու մէջ խիստ օրհնեալ է սերտել ողջակէզը եւ զոհի անասունները կամ թռչունները (Ղեւտ. Ա. 5, 4):

Ողջակէզը կը պատկերացնէ (1) Քրիստոս որ «Իր անձը պատարագ մատուց Աստուծոյ», իր չօրը կամքին հաճոյ ըլլալու համար մինչեւ մահուան հնազանդ ըլլալով: (2) Ողջակէզը քաշական է, քանզի հաւատացեալը ինքը Աստուծոյ կամքին այս հաճութիւնը չէ ունեցած: (3) Ողջակէզը նաեւ փոխանորդական է (Ղեւտ. Ա. 4) վասնզի Քրիստոս ըրաւ զայն մեղաւորին տեղը: Բայց ողջակէզին մէջ պատիժի խորհուրդը կա-

րեւոր տեղ չբռներ (Եբր. Թ. 11-14, Ժ. 5-7, Սաղ. Խ. 6-8, Փիլ. Բ. 8): Անոր մէջ շեշտուած բաներն են (Ղեւտ. Ա. 3-5) ողջակէզ, ընծայ... մատուցանել, իրեն համար ընդունելի, եւ քաւութիւն:

Ողջակէզի համար ընդունելի էին հետեւեալ հինգ շնչաւորները.—

ա. Ցուլ կամ եզ, որ կը ներկայացնէ Քրիստոսը իբր համբերող եւ երկայնամիտ ծառան (Ա. Կոր. Թ. 9, 10, Եբր. ԺԲ. 2, 5) «մինչեւ մահուան հնազանդ» (Եսայ. ԾԲ. 13-15, Փիլ. Բ. 5-8): Այս պատկերին տակ Քրիստոսի Իր անձը մատուցանելը փոխանորդական է:

բ. Ոչխարը կամ գառնուկը որ կը ներկայացնէ Քրիստոսը իր առանց զիմադրելու անձը նուիրելը խաչին վրայ մեռնելու (Եսայ. ԾԳ. 7, Գ. Առաք. Ը. 32-35):

գ. Այծը կը ներկայացնէ մեղաւորը (Մատթ. ԻԵ. 33) եւ երբ կը գործածուի զոհի տեսակէտէ, կը ցուցնէ Քրիստոսը որ «յանցաւորներու հետ սեպուեցաւ» (Եսայ. ԾԳ. 12, Ղուկ. ԻԳ. 33) եւ «մեղք եղած» եւ «անէծք» եղած իբր մեղաւորին փոխանորդը (Գաղ. Գ. 13, Բ. Կոր. Ե. 21):

դ. եւ ե. Տատրակ կամ աղաւնի: Այս թռչունները բնականօրէն կը ներկայացնեն ողբացող անմեղութիւնը, (Եսայ. ԼԸ. 14, ԾԹ. 11, Մատթ. ԻԳ. 37, Եբր. Է. 26) ազքատութեան կ'ընկերանան (Ղեւտ. Ե. 7) եւ կը խօսին Անոր վրայով որ մեր տեղը ազքատ եղաւ (Ղուկ. Թ. 38): Անոր ազքատանալուն ճամբան սկսաւ երբ նա իր ունեցած «Աստուծոյ կերպարանքը մէկդի» զբաւեց վերջացաւ իր անձին զոհ ըլլալով որով մենք հարստացանք (Բ. Կոր. Ը. 9, Փիլ. Բ. 6-8):

Օրինակաւոր զոհերու այս աստիճանները կը փորձեն մեր հասկցողութեան աստիճանը, թէ խաչին վրայ Քրիստոսի մէկ զոհին զանազան երեւոյթները ո՞րքան կը հասկնանք: Իսկ հոռուն հաւատացեալը պարտի տեսնել խաչեալ Քրիստոսը Անոր բոլոր երեւոյթներուն մէջ:

Մինչ արարածներէ առնուած եւ Արարչին իբրը պատկերներ զործածուած այս նիւթը կը սերտենք, տեղն է բսել նաեւ թէ՛ Քրիստոս ինքը պատկերն է Արարչին եւ չօրը, այսինքն ՈՐԴԻՆ ՀՕՐԸ ՓԱՌԱՅ ԼՈՅՍԸ Է ԵՒ ԻՐ ԷՌԻԹԵԱՆ ԲՈՒՆ ՊԱՏԿԵՏԸ (Եբր. Ա. 3):



ՀԱՒԱՏԱՅԵԱԼԻՆ ՀԱՆԳԻՍՏԸ

Հանգիստ բառը Աստուծոյ Գործերն մէջ ամենէն արժէքաւոր եւ քաղցր բառերէն մէկն է: Երբ մէկը հիւանդ է եւ անկողնի կը ծառայէ, միայն այն անձը կրնայ իրապէս գիտնալ թէ ինչ արժէքաւոր բան մըն է մարմինով հանգիստ ըլլալը: Բայց քանի որ հիմա ապականացու մարմինի մէջ կ'ապրինք եւ տակաւին Յիսուսի փառաւոր մարմինին կերպարանակից եղած չենք, շատ անգամներ ցաւեր եւ անհանգստութիւններ կ'ունենանք, «Վասնզի մենք որ այս վրանին տակ ենք, կը հառաչենք ծանրութիւն քաշելով», բայց գիտենք որ օր մը «այս ապականացու մարմինը անապականութիւն պիտի հազնի եւ այս մահականացուն անմահութիւն պիտի հազնի»:

Մարմինով հանգիստ ըլլալ Աստուծոյ օրհնութիւն մըն է իր բոլոր զաւակներուն համար, բայց շատ աւելի մեծ օրհնութիւն մըն է սրտի հանգիստ ունենալ, այն հանգիստը որ միայն Բերիստոսով կրնանք ունենալ, զայն կը վայելենք թէ հիւանդութեան եւ թէ առողջութեան մէջ:

Առտու մը, երբ սենեակէս դուրս ելայ, բնականաբար մօտ եւ քարծր շէնքի մը մէջ բնակող կնոջ մը ինքզինքը պատուհանէն վար նետելով անձնասպան ըլլալը ինծի լուր տուին: Պատճառը այն էր որ ինքը մարմինի առողջութիւնը կորսնցուցած եւ ասոր համար աշխարհային շատ զուարճութիւններէն զրկուած էր: Բայց ուրիշ հիւանդ մը կը յիշեմ որ Աստուծոյ զաւակ մըն էր, երբ իրեն այցելութեան գացի, տեսայ որ ցաւերը խիստ մեծ էին եւ շարունակական, բայց Տէրոջն ունեցած հանգիստը տեղը կը մտար եւ կրնար իր Տէրոջը փառաբանութիւն տալ եւ երգել:

Քրիստոնեան հանգիստ ունի եւ կը վայելէ հետեւեալ երեք կէտերուն մէջ.—

1. Քրիստոնեան իր հոգիին փրկութեան համար գիտար ունի: Ան լսած եւ ընդունած է իր Փրկչին սա խօսքերը որ կ'ըսէ. «Եկէք Ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ եւ Ես ձեզ պիտի հանգչեցնեմ»: Ասոր մէջ մեր բարի գործերը եւ մեր արդարութիւնները չկան, այն Աստուծոյ ձրի պարգեւն է: «Վասնզի ան որ Աստուծոյ հանգիստը

մտաւ, ալ հանգչեցաւ իր գործերէն» (Եբր. 7. 10):

2. Քրիստոնեան հանգիստ ունի իր պանդխտութեան օրերուն մէջ, երբ կեանքի նեղութիւններուն մէջէն կ'անցնի: Աշխարհ հանգիստ չունի: «Ամբարիշտները ալեծով ծովի պէս են, որ չկրնար հանդարտիլ», բայց հաւատացեալը ապաստանարան մ'ունի որ երբ «կերպ կերպ փորձանքներու մէջ կ'իյնայ», հոն իր հոգին հանգիստ կը գտնէ: «Տէրոջը անունը ամուր աշտաբակ է, արդարը անոր կը դիմէ ու ապահով ապաստանարան կ'ունենայ» (Առակ. ԺԸ. 10):

Նաւ մը սաստիկ ալեկոծութեան բռնուեցաւ. ճամբորդները սկսան սոսկումսի մէջ իյնալ եւ շատերն ալ իրենց կեանքէն յոյսերնին կտրած կ'ուլային: Այս պահուն նաւուն մէջ պտրտող, նոյն ատեն շատ հանգիստ եւ հանդարտ երիտասարդ մը տեսնուեցաւ: Զարմանքով անոր ըսին թէ այսպիսի վտանգաւոր վայրկեանի մը մէջ ինչպէ՞ս այսչափ անհոգ ու հանդարտ կրնար ըլլալ: Տղան իր մատովը ցոյց տուաւ նաւապետը որ նաւուն դեկը իր ձեռքերուն մէջն էր, եւ ըսաւ, «Այն մարդը իմ հայրն է»:

Հաւատացեալն ալ կը ճամբորդէ փրկութեան նաւուն մէջ, եւ շատ անգամ սաստիկ ալեկոծութիւններու կը բռնուի, բայց գիտէ որ այդ նաւուն նաւապետը Քրիստոս Ինքն է եւ կարող է ապահով տանիլ մինչեւ այն օրհնեալ նաւահանգիստը ուր ալ գիշեր եւ մըրթիկ չկայ:

3. Հաւատացեալը ուրիշ հանգիստ մը եւս ունի, որ իրեն խոստացուած է, ներկայիս անոր հաւատքով կը նայի եւ քիչ վերջը պիտի ժառանգէ, ուր «Աստուած անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ եւ ա'լ մահ պիտի չըլլայ, ոչ սուղ եւ ոչ աղաղակ եւ ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ ետեւ, վասնզի առաջուան բաները անցան» (Յայտ. ԻԱ. 4):

Քրնարներ հըրեշտակային,

Կ'օրհնեմք ինչ եռանդագին,

Պալատին մէջ Արքային,

Հոն տես զիս.

Ուր սրտեր հաշտ անխըռով,

Կը ձուլոին անբիծ սիրով,

Եւ կ'ապրին յաւերժ Հօրն քով

Հոն տես զիս:

Տէրոջը ծառան, Ձեր եղբայրը

Վեր. ՊԵՏՐՈՍ Ս. ԱԿԻԻԼԵԱՆ

Ճիլատէլ՝ Գիւր

ՊԱՏՄԱԿԱՆ

.....

ՄԵՆ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ
ՀԱՅՈՑ ՀԱՒԱՏՈՑ ԸՆՏԱՆԻՔԷՆ

.....

ԳՐԻԳՈՐ ԼՐԻՍԱԿՈՐԻՉ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ Յ. Տ.
222-331.—

Այս շրջանի սկիզբը Հայաստանի գահուն վերայ կը բազմէր կորովի ու իմաստուն թագաւոր մը, Խոսրով Ա. (222-250): Ան գիտցաւ իր իշխանութեան սկիզբը բարեկամական յարաբերութիւններ մշակել իրարու մրցակից երկու մեծ, հզօր պետութեանց, — Հռովմի ու Պարսկաստանի հետ, զսպել Կովկասի լեռնական թշնամիները եւ ապա նոյնիսկ ինքզինք իր երկրի յառաջդիմութեան: Բայց դժբախտաբար շատ կարճատեւ եղաւ այս խաղաղ շրջանը՝ Պարսկաստանի մէջ ծագած յեղափոխութեան մը պատճառաւ: Երկար ատենէ ի վեր հոն կ'իշխէին Պարթեւ ազգէն սերած Արշակունի թագաւորներ, ասոնց գէմ ապստամբեցաւ Արտաշիւր, պարսկ դօրավարը, որու միացան գրեթէ բոլոր պարսիկները: Արշակունիները յաղթուեցան, Արտաշիւր բարձրացաւ Պարսկական գահուն վրայ եւ ատով հաստատուեցաւ նոր հարստութիւն մը — Սասանեանը (226):

Խոսրով Ա. ալ ծագումով Պարթեւ Արշակունի էր, բնութի ոչ ինքի կրնար հաշտ աչքով դիտել Պարսկաստանի մէջ տեղի ունեցած յեղաշրջումը, ոչ ալ Արտաշիւր կարող էր ինքզինք ապահով զգալ, քանի Հայաստանի կը տիրապետէին իր թշնամիները, Հայ Արշակունեանց հարեւորութիւնը: Ուստի դարձեալ փոխորկեցաւ Արեւելքը: Սկսաւ երկարատեւ պատերազմներու շարք: Սակայն Խոսրով յաջողեցաւ ոչ միայն իր հայրենիքը պաշտպանել Արտաշիւրի ոտնձգութիւններուն ու աւերածութիւններուն դէմ, հապա մի քանի անգամ յարձակեցաւ նոյնիսկ պարսկական սահմանէն ներս քանդի իրեն օգնական էին նաեւ Հռովմայեցիք, որոնց քաղաքական սուր հոտառութիւնը զուշակած էր թէ Սասանեանները քիչ ետք ահաբեկու, վտանգաւոր թշնամի մը պիտի դառնային Հռովմի արեւելիկան քաղաքականութեան: Պատերազմը տեւեց շատ երկար:

Ուստի Արտաշիւրի որդին ու յաջորդը, Շա-

պուհ Ա. նենգութեան դիմեց. մեծամեծ խոստումներով Հայաստան զրկեց Պարթեւ ազգէն Անակ Պահլաւունին: Սա Խոսրովի քով ապաստանեցաւ, իրր թէ հալածական Շապուհէն եւ որսի ատեն դաւաճանօրէն սպաննեց Հայոց թագաւորը, իր պարթեւ ազգականը, որ իրեն միամտօրէն եղբայրական օգնութիւն ու մտերմութիւն ցուցուցած էր:

Բայց զագրելի դաւաճանը անպիտոյթ չմնաց. քննուեցաւ իր դաւակից եղբօրը հետ եւ երկուքը միասին Արտաշիւրի կամուրջէն վար նետուելով սպաննուեցան եւ իրենց ընտանիքին գրեթէ բոլոր անդամներն ալ սրէ անցուեցան:

Այսու հանդերձ մէջտեղէն վերցուած էր նաեւ Հայաստանի հզօր պաշտպանը, ուստի Շապուհ յարձակեցաւ մեր որբացած հայրենիքին վրայ, գրաւեց զայն՝ հակառակ նախարարներու դիմագրութեան եւ զայն պարսկական նահանգի մը վերածեց: Իր հրամանով սրէ անցուեցաւ նաեւ Խոսրովի ընտանիքը. ազատեցան միայն երկու մանկիկներ, Խոսրովի դուստ եւ Տրդատ: Օտա Ամատունի նախարարը առաւ առաջինը եւ արքունական գանձերը եւ ապաստանեցաւ Անի (Քէմախ) ամրոցը: Իսկ Արտաշաղ Մանգակունին փախցուց Տրդատը ու տարաւ զայն մինչեւ Հռովմ:

Հոս ուշիմ արքայորդին մէկ կողմէն հետացաւ յոյն ու լատին լեզուներուն, գրականութեան ու փիլիսոփայութեան, իսկ միւս կողմէն հռովմական բանակին մէջ ոտացաւ լաւ զինուորական կրթութիւն մը եւ պատրաստուեցաւ իր արքայական կոչումին: Նշանաւոր հանդիսացաւ նաեւ իւր ըմբիշ ու ձիավար:

Վերջապէս Հռովմայեցիք ժամանակը հասած նկատեցին՝ Հայաստանը, այդ բնական զօրաւոր ամրոցը, ազատելու պարսիկներէն, առնելու իրենց ազդեցութեան տակ եւ ատով պատուար մը կանգնելու ընդդէմ պարսկական յարձակումներուն դէպի Փոքր Ասիա: Ուստի Տրդատը, իրենց պաշտպանեալն ու բարեկամը Հռովմական բանակով մը զրկեցին (276) Հայաստան: Կապաղովկիոյ մէջ հայ փախստական նախարարներն ալ իրենց հայ զինուորներով միացան երիտասարդ հայրենասէր եւ քաջ թագաւորին ու յարստարդ հայրենասէր վրայ: Պատերազմը ընդմիջակեցան պարսից վրայ: Պատերազմը ընդմիջուցներով երկարատեւ եղաւ: Հազիւ տասն ու մէկ տարիէն յաջողեցաւ Տրդատ իր ամբողջ երկիրն ազատագրել (287) պարսկական լուծէն ու խաղաղեցնել զայն: Այդ պատերազմներու ընթացքին Տրդատ մեծ քաջագործութիւններ կա-

տարած է, զորս պանծացնելու համար հայ ժողովուրդը կ'ըսէր, «Սէգ Տրդատի նման, որ իր սիգալովը գետերու թումբերը աւրից եւ ցամփեցուց ծովերու յորձանքները»:

Սակայն պատերազմական այդ դառնադէտ տարիներուն յաջորդեց երկարատեւ շրջան մը (287-351), երբ խաղաղութիւնը միայն երկու կարճատեւ պատերազմներով ընդհատուեցաւ, եւ երբ Տրդատ իր հանճարը ի յայտ բերաւ իբր թագաւոր մը, որ ճշմարտապէս կ'ըմբռնէր իր ժողովուրդին ամենամեծ բարոյական ու հոգեկան շահերը եւ կը հետապնդէր զանոնք՝ առանց ընկրկելու սեւէ դժուարութեան առջեւ:

Ահա այդ շրջանին մէջ կ'իյնայ զործունէութիւնը Գրիգոր Լուսաւորիչի, որուն վիճակուած էր — Աստուծոյ տնօրէնութեամբ ու Տրդատի աջակցութեամբ — քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ տիրական կրօնի բարձրացնելու վսեմ գործը:

ԳՐԻԳՈՐԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ.—

Ծնած է Հայաստանի մայրաքաղաքին, Վաղարշապատի մէջ: Ծագումով Պարթև է, Սուրենեան իշխանական տոհմէն: Իր մայրն է Ողոհի եւ հայրը՝ փառաւոյ ու դաւաճան Անակը, որ նախանձով կը դիտէր իր թագակիր ազգակից ու ազգական Արշակունիները: Ուստի երբ Մասանեանները իրեն Գուշանաց զահը խոստացան, համաձայնեցաւ անոնց հետ եւ նախ զործեց Արշակունեաց Պարսկական ճիւղին դէմ ու ապա դաճանութեամբ սպաննեց հայ Արշակունի թագաւորը, Խոսրովը (250):

Բայց իր ստորին ոճրագործութեան վարձքն եղաւ ոչ թէ թագ, հապա իր եւ իրեններուն անարգական մահը: Ազատեցաւ միայն իր փոքր որդին, որ հաւանաբար Սուրեն կը կոչուէր: Եւ թող անունով կեսարացի քրիստոնէայ մը, որուն քոյրը — Սուփա — Սուրենի ստնտուն էր, ծածկեց մանկիկը հայոց վրէժխնդիր աշխերէն ու փախցուց Կեսարիա, հոն դայն մկրտել տալով կոչեց Գրիգոր:

Այսպէս՝ Գրիգոր շատ կանուխ զրկուեցաւ անկան մը բնական, աստուածատուր պաշտպաններէն, ծնողքէն, բայց որբութիւնը — թէեւ ընդհանրապէս չարիք մը — մեծ օրհնութիւն եղաւ իրեն համար: Ասով նա ազատեցաւ ստորին նկարագրի տէր հօրը ազդեցութենէն եւ անոր ինկած ընտանիքին ապականեալ մթնոլորտէն եւ փոխադրուեցաւ Կեսարիա, քրիստոնէայ միջավայրի մը մէջ:

Այդ ժամանակ Կեսարիա, Հռովմէական Կապադովկիա նահանգին մայրաքաղաքը, մին էր յոյն քաղաքակրթութեան կարեւոր կեդրոններէն: Ունէր նաեւ զօրաւոր ու եռանդուն եկեղեցի մը: Դիկոսի (250) եւ Վաղերիանոսի (258) հալածանքները, որոնք շատ մը սուրբերու նահատակութեան պատճառ եղած էին, Քրիստոս զործածեց իբր միջոց արթնցնելու եւ զտելու իր եկեղեցին, ինչպէս հռովմէական աշխարհի շատ վայրերուն նոյնպէս նաեւ Կեսարիոյ մէջ: «Շատ մը անպարկեշտ տարրեր բաժնուեցան եկեղեցիէն... եւ մարտիրոսներուն թափած արեան վկայութիւնը դաւա շատ սրտերու»: Ուստի այդ հալածանքներուն յաջորդող խաղաղութեան մօտաւորապէս 40 տարիները (260-298) ծաղկման ու յառաջդիմութեան շրջան մը եղաւ նաեւ Կեսարիոյ եկեղեցւոյն համար:

Այդ բեղմնաւոր շրջանին էր ահա երբ Գրիգոր ապրեցաւ Կեսարիոյ մէջ: Սուփա, որ լեցուած էր մեր Փրկչին սիրով՝ ջանացած էր իր կաթին հետ միասին քրիստոնէական լոյս հաւատքն ալ ջամբել իր սանին: Իր հարուստ եղբօր միջոցաւ շատ կանուխ յարաւերութեան մէջ դրաւ Գրիգորը այդ կենդանի եկեղեցւոյն հետ:

Անոր դաստիարակութեան զործին մէջ մասնաւոր դեր ունեցաւ Կեսարիոյ եպիսկոպոսը՝ Փերմիլիանոս, որ Որոզինոսի հետեւող կարեւոր անձ մըն էր: «Անակի որդին», մեղապարտ ազգի այդ շառաիղը, մտացի էր յոյժ եւ ի բնէ օժտուած առաքինական ձիրքերով: Քրիստոնէական ոգին, որով հրահանգուեցաւ իր հօգին, մշակեց այդ ձիրքերը եւ դարձնեց անոր մեծ նկարագիրը: Իր բարձր դաստիարակութեան հետ ան ձեռք բերաւ նաեւ բազմակողմանի հմտութիւն: Տիրացաւ հայ եւ հելլէն լեզուներուն: «Իր ուսումնասիրութեանց զլիսաւոր առարկան բրաւ Աստուածաշունչը» (1):

Իր քրիստոնէական դաստիարակութիւնը, բազմաթիւ մարտիրոսներու յիշատակը, նոյրեալ հաւատացեալներու հետ ունեցած մտերիմ հաղորդակցութիւնը, մանաւանդ Աստուծոյ խօսքին ըմբերցումը եւ ունկնդրութիւնը զործածեց Ս. Հոգին՝ ծնելու Գրիգորի մէջ նոր, աստուածային կեանքը: Նա տեսաւ իր եւ իր հօրը մեղքերը, փշրուեցաւ Քրիստոսի առջեւ, հաւատաց Անոր իբր իր Փրկչին եւ նուիրուեցաւ Անոր իր

(1) Գորեգին Եպիսո Տրոպիլոսի. «Աշխարհի Լոյսն ի Հայտ էջ 119, 150:

ՊԱՏԱՆԵԱՅ

ՄՈՒՐԱՅԻԿՆ ՈՒ

ՋՈՒԹԱԿԱՀԱՐԸ



Գարնանային պայծառ կիրակի մըն էր: Մեծ քաղաքի մը նշանաւոր պողոտային վրայ հոռոգեռ կար: Աշխոյժ գուլեր, ուրախ խուսքեր ու երջանիկ ընտանիքներ եկեղեցիներէն դուրս ելած, չէին ուզեր անմիջապէս երթալ իրենց սենեակներուն մէջ փակուիլ, ու հանդարտ քայլերով կը պտըտէին պողոտայի երկայնքին: Մանուկներ մանաւանդ, իրենց ծնողներուն ձեռքէն բռնած, գուարթ ճիչերով օդը կը լեցնէին: Ամէն մարդ զոհուածի եւ անփոյթ կ'երեւէր:

Անցորդները հագիւ թէ ուշադրութեան կ'առնէին հոյակապ շէնքի մը պատին տակ կեցած ալիգարդ ծերունի մը: Հաշմանդամ մըն էր ան: Ձախ ձեռքով բռնած էր ջութակ մը: Աջ թեւը փայտեայ էր, որուն ծայրը պարզ մեքենակաշուրթեամբ մը հաստատուած էր ճպոտ մը: Ծերունին կ'աշխատէր ճպոտը լարերուն վրայ տարուբերել, մինչ իր ձախ ձեռքին ոսկրացած մատները եղանակ մը դուրս բերելու ճիգը կ'ընէին: Առջեւը կեցած էր իր հաւատարիմ շունը, բերնին մէջ բռնած գլխարկ մը գոր կը ներկայացնէր անցորդներուն: Փոքրիկները կը զիտէին, կը խնդային ու կը հեռանային: Մեծերէն շատ քիչէր պղինձէ դրամներ կը նետէին երբեմն գլխարկին մէջ:

Մարդը յոգնեցաւ վերջապէս. ա'լ չէր կրնար շարժել իր ճպոտն ու մատները: Իր առջեւէն հոսող բախտաւոր բազմութեան անտարբերութիւնը յուզեց զինքը. ծունկերը կ'թոտեցան, նստաւ

ամբողջ էութեամբ պաշտելու զԱյն իւր իր Աստուածը:

Շատ կանուխ իմացած էր, հաւանաբար Եւթաղէն կամ Սոփիայէն, իր ապիրատ հօր զործած ոճիրի մասին: Ուստի Աստուածային սիրոյ ձայն մը կը մղէր զինքը գործելու եւ ծառայելու այն ժողովուրդին, որուն դէմ իր հայրը այդ ահուկի դաւաճանութիւնը գործած էր: Աստուծոյ տնօրէնութեամբ շուտով եկաւ ատոր ժամանակը:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

քարի մը վրան, գլխը կախեց կուրծքին վրայ եւ սկսաւ լուռ հեկեկալ:

Այդ պահուն անցորդ մը կանգ առաւ ծերունիին առջեւ եւ մի քանի երկվայրկեան զայն դիտելէ վերջ, ոսկեղբամ մը գետեղեց անոր ափին մէջ եւ ըսաւ ցած ձայնով:

— Ձեր ջութակը տուէք ես նուագեմ, դուք դրամը հաւաքեցէք:

Անցորդը առաւ դործիքը եւ սկսաւ նուագել: Հարերը հագիւ սկսած էին թրթռալ երբ իր շուրջը բազմութիւնը սկսաւ խտանալ արագօրէն: Նուագարանէն կը հոսէր այնպիսի դաշայլելի երաժշտութիւն մը որ մարդիկ իրենց քայլերը անըզպաւարար կը կասեցնէին եւ վերացած մտիկ կ'ընէին տպաւորիչ լուսթեան մը մէջ: Քսակները սկսան բացուիլ: Ոչ միայն պղինձէ դրամներ կը հոսէին, այլեւ արծաթ եւ ոսկի մետաղներ ալ կը նետուէին: Գլխարկը շուտով լեցուեցաւ ու շունը անկարող էր զայն իր բերնին մէջ պահել: Արուստագէտը ծռեցաւ ու խնդրեց ծերունիին որ պարպէ զայն: Այս վերջինը մեքենաբար կատարեց պատուէրը, արտասուալից ու շուարած աչքերով: Գլխարկը երկրորդ անգամ լեցուեցաւ: Ջութակահարը վերջապէս յանձնեց դործիքը եւ շարունակեց իր ճամբան արագ քայլերով:

— Ո՞վ էր այդ, կը հարցնէին անձանթներ իրարու. յանկարծ բազմութեան մէջէն ձայն մը պատասխանեց.

— Միթէ չէ՞ք ճանչնար, մեծանուն ջութակահար Պր. Ք... էր ատիկա:

— Պր. Ք... ազադակեցին ամէն կողմէն, մենք կը խորհէինք թէ արդէն հասարակ մարդ մը ըլլալու չէ ան:

Սիրելի գաւառներ, այս պատմութիւնը զաղտնիք մը երեւան կը բերէ, զաղտնիք մը հողեւոր որ ամենուն համար, ինչպէս մեզի մեծերուն համար ալ մեծ կարեւորութիւն ունի:

Աշխարհի վրայ կան շատ մեծ մարդիկ՝ թագաւորներ, դիւանագէտներ, նախագահներ, հարուստներ, վաճառականներ, մեծ գործարաններ, պատուաւոր պաշտօնեաներ, կառավարիչներ, դորապետներ, ուսուցիչներ, պատուելիներ, որոնք մասնաւոր դիրքի մը հասած են ընկերութեան մէջ: Ասոնք զոհ են եւ աղէկ դիրքի մըն ալ հասած: Ինչպէս մուրացկանը ջութակը ձեռքն առած ձայն կը հանէր եւ մարդոց ահանջները կ'զբաղեցնէր, նոյնպէս այդ մարդիկը իրենց պաշտօնովը, գործերովը, գեղեցիկ խօսքերովը մարդոց ուշադրութիւնը կը գրաւեն, անոնք բան մը կ'ընեն: Մարդիկ իրենք իրենց

ատկէ աւելի բան մը չեն կրնար ընել, ինչպէս ձեռքին մէջ իյնան եւ Ս. Հոգին զանոնք կառավարէ, այն ատեն անոնք տարբեր արժէքով մարդիկ կ'ըլլան: Կը ճանչնանք Յովնանի որդին Սիմոնը, որ Պետրոս մականունեցաւ Յիսուսի կողմէ. անիկա ձայն մը կը հանէր, բայց ի՛նչ տխուր ձայն մը քահանայապետին գաւիթին մէջ: Պետրոս որքա՛ն կ'ամչնար այդ հանած ձայնին համար: Սակայն զանիկա կը տեսնենք Պենտեկոստէի օրը տաճարին մէջ երբ Ս. Հոգին ձեռքն անցած կը քարոզէր հազարաւոր մարդոց, ցոյց տալով Յիսուս Քրիստոսով եղած ձրի փրկութիւնը: Այս ձայնը բոլորովին տարբեր էր: Կը դարմանէր մարդիկը, վասնզի ինք չէր խօսողը: Իր մէջ գաղտնիք մը կար, Սուրբ Հոգին գրաւած էր զինքը եւ ազատեւր էր հին մարդուն ձեռքէն:

Կան նաեւ սիրելի գաւազներ, որոնք իրենց դպրոցին մէջ կ'աշխատին ու թերեւս շատ ալ արժանի են վարձատրութեանց, սակայն այս աշխատութիւնները իրականութեան առջեւ ջուլթակի անորոշ ձայնին կը նմանին, ձայն մը որ միայն ձայն է, բայց առանց նշանակութեան: Իսկ երբ ջուլթակը — այդ սիրելի գաւազը — երկնային երաժիշտին ձեռքն անցնի, անկէ հմայող ձայնի եղանակներ երեւան պիտի դան ու շատ անձերու բերնէն ալ օրհնաբանութիւններ երեւան պիտի բերեն: Պօղոս առաքեալ իր գացած տեղերուն մէջ պատճառ կ'ըլլար որ Քրիստոսը փառաւորուէր:

Մարդու մը իրական արժէքը Քրիստոսի ձեռքը իյնալով կը յայտնաբերուի: Եղիբ ուսուցիչ մը Քրիստոսի ձեռքին մէջ, վաճառական մը, կառավարիչ մը, պաշտօնակա մը, պատուելի մը Քրիստոսի ձեռքին մէջ: Այդ ձեռքերուն մէջ երեւան պիտի գայ կեանքիդ իրական արժէքը:

«Հին մարդը ձեր վրայէն հանեցէք»:

ՄԱՆԿԱՆ ՄԸ ՀԱՒԱՏՔԸ

Մարի Լանկընֆէլտ Այգասցի աղջիկ մը, իր 7 տարեքին մէջ արդէն կորանցուցած էր ծնողքը եւ տարուեցաւ իր հօրեղբոր տունը, հոն անոր պատիկ աղջիկին հետ խաղալու եւ անոր հոգ տանելու համար: Հօրեղբոր տան մէջ խեղճ Մարի ճշմարիտ մարտիրոսութեան կեանք մը ապրեցաւ, խիստ տառապեցաւ եւ անօթի մնաց, այնպէս որ իր տաներորդ տարիքին ճշմարիտ հաշմանդամ մը եղաւ: Այս պատճառաւ իր տառա-

պանքը աւելի շատցաւ եւ մահուան ճամբուն մէջ կը գտնուէր անյոյս, եթէ իր պզտիկ բարեկամուհին, որուն հետ սիրով կապուած էր, իրեն գաղտնի ուտելիք չտար:

Իր արտաքին կեանքի տառապանքը զինքը մղեց հոգեւոր արթնութեան մը, այնպէս որ նա պիտեցաւ գաղտնիքը իր կեանքի բոլոր պարագաները Տէրոջը բերելու: Տարիներու ընթացքին մէջ այդ պզտիկ բարեկամուհին կարգաւ տրւաւ Աստուծոյ խօսքը եւ մտիկ ըրաւ: Օրին մէկը 23 Ապրիլ 1747ին իր 14րդ տարեդարձին կը կարդային միասին Տէրոջը հրաշագործութեան պատմութիւնը չորցած ձեռքին վրայ: Այս պատմութեան խորհրդածութեան մէջ կը գտնուէր, երբ հաւատոյ զօրաւոր ճառագայթ մը իր միտքն ու սիրտը լուսաւորեց: Եթէ Տէրը կրնար չորցած ձեռքը բժշկել, կրնար նաեւ զինքը բժշկել: Ուրեմն առանց ժամանակ կորսնցնելու, աչքերը վեր բարձրացուցած աղաղակեց, «Ով իմ սիրելի Յիսուս, եթէ ինծի օգնես, կեանքս Քեզի պիտի ըլլայ»:

Այս աղօթքին վրայ յանկարծ կեանքի ուժեր զգաց իր աջ կողմին վրար: Իրեն այնպէս կ'երևէր թէ Տէրը իրեն շատ մօտ էր իր օգնող ձեռքով: Փորձեց իր երկար ատենէ ի վեր հաշմանքը վեր վերցնել, յետոյ գլուխը սկսաւ շարժել, ապա իր ձախ ձեռքը եւ յետոյ խաչաձեւ իրարու վրայ ծալուած ոտքերը: Կէս ժամ յետոյ, թէեւ դողդոջուն, կրցաւ ուղիղ կայանիլ ոտքերուն վրայ: Իր շուրջ հաւաքուող տղաքը, մանաւանդ ամէն օր իրեն Ս. Գիրքէն կարդացող բարեկամուհին ցնծութեամբ աղաղակեցին: Հօրեղբոր կիներ, որ շատոնց իրեն համար ձանձրոյթ պատճառող այս աղջկան մահուան կ'սպասէր, սկսաւ լուտանքներով զինքը անիծել այսպանելով զինքը թէ ո՛վ զիտէ ի՛նչ սատանայական ուժերու հետ հաղորդակցութեան մտած է: Սակայն Մարի ուրախութեամբ պատասխանեց. «Ո՛չ, ես Տէրոջը աղաչեցի ու Անիկա ինծի պատասխան տուաւ: Նոյնը կը հաստատէին նաեւ պզտիկները ըսելով «Մենք լսեցինք թէ ինչպէս անիկա Տէր Յիսուսի հետ խօսեցաւ»:


Տէրը յիշաւ զինքը բժշկած էր:

Աղջիկը մարմնաւոր ամէն հաշմանդամութեանէ ազատուած էր եւ անկէ վերջ ալ անկաշկանդ իր կեանքին բոլոր օրերուն մէջ Տէրոջը ծառայեց:

«Նեղութեան օրը ինծի կանչէ, ես քեզ պիտի ազատեմ ու զուէն զիս պիտի փառաւորես» Մաղ. Ծ. 15:

ԵՐԳ ՄԵԾԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԵՒ ՊԱՏԱՆԵԱՅ ՅԱՐՄԱՐ

ՏԷՐՈՋ ՀԱՉԱՐԱՄԵԱՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ



1. Լէր ուրախ, ո՛վ սուրբ եկեղեցի,
Մօտ է, կուգայ անմահ Փեսան քո,
Օ՛հ, պատրաստուէ դիմաւորելու,
Տէրն պիտի տիրէ «հազար տարի»:

2. Ի՛նչ չըքնող օրեր «հազար տարի»,
Ընտրեալներն վայելեն պիտի,
Արդարութեան Արեւն Սիօնի
Աշխարհիս վրայ պիտի փայլի:

3. Ազդ արարէք բոլոր աշխարհի,
Խեղճ ու թշուառ ու հէք ազգերու,
Շուտ կուգան օրերն երանելի
Տէրն պիտի տիրէ «հազար տարի»:

4. Հաւատացեալներն թող բերկրանան,
Ալ չիկայ մահ եւ ոչ տրամութիւն,
Զի պիտի իշխէ խաղաղութիւն,
Տէրն պիտի տիրէ «հազար տարի»:

5. Ո՛հ, յոյժ կարօտ եմ այն օրերու
Եւ ըսպառող եմ ցորեկ գիշեր,

Սորն երգի խօսքերն ու
եղանակը հեղինակողն է
ստորագրեալ եղբայրը: Եր-
բեմն կ'ուզենք առ ի քա-
ջալերութիւն հրատարա-
կել այսպիսի հեղինակու-
թիւններ, բայց մեր ջանքն
է միշտ մնայուն երգեր հը-
տարակիւ, այնպէս որ եթէ
երաժշտական և տաղաչա-
փական օրէնքներու հա-
կառակին հեղինակութիւն-
ները եւ սրբազրութեան
կարեւորութեան մէջ չեն
գտնուիր, չենք հրատա-
րակեր:

Սուրբ փեսային հետ «հազար տարի»,
Որ ապրիմ Անով յաւերժ օրեր:

6. Շուտ եկ, ո՛վ իմ Յիսուս, ո՛հ, շուտ եկ,
Հսկասող եմ կարօտով, շուտ եկ,
Փափաքս է յաւիտենականի,
Ապրիլ Քու հետըդ «հազար տարի»:

7. Ո՛հ, ի՛նչ երջանիկ զըւարթ օրեր,
Ընտրեալք մահուանէ յարեալ են,
Եւ պիտ' պսակուին փառաց թագեր,
Ու ապրին Տէրոջ հետ յաւիտեան:

8. Փառք, գոհութիւն Փրկիչ Յիսուսի,
Զի առաւ չըքաւորս արժանի,
Թէ հետ ընտրեալներու միանամ,
Թագաւորութեան մէջ յաւիտեան:

Տէրոջը անարժան ծառայ

ՄԱՀԱԿ ՇԱՆԼԵԱՆ

Ճիսր Շուղր

ԱՅԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարանամիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղին վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' (վեր.)Յ. Ն. Ղազարսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 10 քարոզածողով, 2 r. Philippe de
» 11.30ին աղօթածողով, Girard

Կիր. դասեր մանկանց ժամը 8. 30ին նոյն տեղը
Սէն ժուլիէն, Լէզ Օլիվ, Ս. Ժէրոմ Ս. Ան-

ժուան Եկեղեցւոյ աղօթածողին մէջ
Ս.Միք. Ալմաստուր բնակարաններու մէջ

Շարանամիջի աղօթածողովներ
Գ.շր. ժամը 14ին Սէն Ժուլիէն

Գ.շր. 20ին քաղաքը 2 r. Philippe de Girard
Ե.շր. ժամը 2ին Ս. Միք.

Ե.շր. ժամը 19ին Սէն Ժէրոմ
Ռ.շր. ժամը 2ին Սէն Ժուլիէն

ՍԷՆ ԼՈՒ.—Քարոզիչ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Armen. Bd. Escalon St. Louis

Կիր. ժամը 8 30ին մանկանց կիր. դաս:
10. 30ին Ս. գրական ուսումնա

15 30 ին քարոզածողով:
ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԻԹ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
ՍԷՆ ԼՈՒԻ— Քարոզիչ' Պատ. Ս. Պազգալեան

11 Impasse des Muriers St. Louis
Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

Ճ. 10ին աղօթածողով, Ճ. 14.30ին քարոզ
Գ.շր. ժամը 20ին Անտ. ժողով

Ռ.շր. ժամը 20ին սերտողութիւն
ԼԱ ՍԻՌԵԱ.— Կիր. ժամը 9.30ին աղօթածողով

15 ին քարոզածողով,
Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....
ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' վեր. Ա. Փափազեան

Pont-d'Aubenas, (Ardèche)
Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԼԻ.—
Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻԻՄԱՐ.—
Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:
.....

ՎԱԼԱՆՍ.— Հովիւ Բրոշ. Գ. Գ. Խայկեան
1 r. du Colombier Valence (Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
Եկեղեցիին մէջ

ԽՕՄԱՆ.—
Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ' վեր. Ժ. Պարսումեան,
18, Rue du Dr. Rebatal

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով
23 Rue le Royer

11ին աղօթածողով նոյն տեղը:
15 ին երիտասարդներու եւ երիտասարդու-

հիւներու ժողով ամառն երկրորդ եւ չոր-
րորդ կիրակիներուն, նոյն տեղը:

ՏԷՍԻՆ.—
Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.
ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:
ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—
Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):
ՍԷՆԹ ԼԻՅԻԷՆ—Քարոզիչ Պատ. Ի. Արլանդեան

60 Rue Richelandière
Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République
17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ
ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....
ԲԱՐԻՋ— Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոլսաքեան,

10 bis Villa de la Gare, Vanves (Seine)
Կիր. ժամը 10 30ին քարոզածողով

11 Rue Jean Bart Ա. յարկ Met. Rennes
Ամառն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Բ. քա-

նախօռնին: Ամառն Գ. կիր. ժ. 16ին Ս. Բ. Ը.
37 Rue Tournefort Paris 5 Metro Moube

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով
ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulineaux

ԱԼՖՈՐՎԻԼ.— Քարոզիչ' Պատ. Մ. Վէֆլեան
22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց
Կիր. ժամը 10ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville
Երկու կիր. անգամ մը 7.30ին երկու խումբ ժողով

Պ. Տէրոջմով սիրելի եղբայր... Ապահով եմ որ «Բանբեր» շատերուն օրհնութիւն կ'ըլլայ: Տէրը պաշտպանելով ամէն սխալ վարդապետութիւններէ, միմիայն իր փառքին համար դորձածէ զայն: Հոգեւոր թերթեր ամենէն զօրաւոր աւետարանչական բեմերն են, անոնց ձայնը մինչև ուր որ կը հասնի, առայժմ չենք զիտեր, զայն պիտի զիտնանք երկիրքը, ինչպէս նաեւ անոր զտած արձագանգներուն արդիւնքը: Ուրիմն քաջ եղէք ու Տէրոջը փողը թող հնչէ ամէն կողմ Զեր թերթին միջոցաւ...

Մասնաւոր շնորհակալութիւն «Բանբեր»ի վերջին էջի երգերուն համար, զորոնք շատ կը սիրենք եւ կը սորվեցնենք նաեւ մեր շրջանակներուն մէջ:

Լ. Սիրելի... «Բանբեր»ը գայուն պէս, անմիջապէս երգին կը նայիմ, եւ կ'սկսիմ նուագել եւ զաւակներուն ալ կը սորվեցնեմ:

Հ. Մեր կիրակնօրեայ դպրոցի աշակերտները ամէն կիրակի ուրախութեամբ կ'երգեն «Բանբեր»ի գեղեցիկ երգերը:

Հ. Սիրելի... Զեզ Մարաշու պատերազմէն վերջը եւ մանաւանդ մի քանի տարիներէ ի վեր «Բանբեր»ի միջոցաւ ճաննալու առիթը ունենալուն համար ուրախ եմ:

Մի քանի անգամներ մզուած եմ թէեւ, առիթը այսօր ներկայացաւ արտայայտելու երախտապարտ գնահատանքս «Բանբեր» թերթի մասին, թէ մեր զաւակներովը միասին կը սիրենք կարգաւ «Բանբեր»ը եւ մեծապէս կ'օրհնուինք: Նաեւ աղօթող ենք որ Տէրը քաջալերէ եւ զօրացնէ ձեզ այս օգտակար ձեռնարկին մէջ, եւ մեծ հունձք յառաջ քերէ իր թաղաւորութեանը:

Տէրոջմով սիրելի եղբայրներ «Բանբեր» հոգեւոր ամսաթերթի խմբագիրներ.— Հինգ ամիսէ ի վեր Զեր կողմանէ զրկուած «Բանբեր»ը կ'ստանամ (այս տարի ալ սոյն եղբոր՝ ձրի «Բանբեր» կը զրկուէր): Նախ իմ խորին երախտազիտութիւններս կը յայտնեմ Զեր գոհողութեան, սրու փոխարէն իմ ընկիւթս իբր Սատուծոյ մէկ տըկաւը զաւակը ալ է որ ես պարտաւոր կ'զգամ ձեր միջոցով եղած հոգեւոր զործին համար աղօթել: Ուրախ եմ որ «Բանբեր» հոգեւոր ամսաթերթը ինծի համար օրհնութիւն մը եղած է, հոգեւոր կեանքի մէջ հաստատ մնալու, ոմանց փորձառութենէն ձեր ալ աղօթքներէն: Պիտի խնդրէի որ ինծի համար մասնաւոր աղօթող-

ներ զտնուէին «Բանբեր»ի ընտանիքէն, ոչ միայն մարմնոյս առողջութեան որը ժամանակաւոր է, հապա աւելի հոգեւոր կեանքի համար, որ հաստատ մնամ մինչեւ մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի փառաւոր գալստեան ատենը եւ ռեւէ արտունջի հոգի չզտնուի իմ մէջս հիւանդութեանս պատճառաւ: Մէկ տարի եւ ութը ամիս է որ հիւանդանոց կը զտնուիմ, սակայն չեմ յիշեր ռեւէ տեսակէ արտունջ: Աստուած տայ որ մինչեւ վերջը կարենամ ըսել «Աստուծոյ կամքը օրհնեալ ըլլայ» եւ հաւատք ունիմ որ օր մը Աստուած պիտի բժշկէ այս հիւանդութեանէս: Սակայն հակառակ պարագային եթէ չառողջացնէ ալ, իր կամքը օրհնեալ ըլլայ, զիս սպաննէ, զի՞նքը չպիտի թողում: Բայց հիմա երթալով առաջունէ լաւ եմ եւ առողջ, սակայն հիւանդանոցէն ե՞րբ պիտի ելլեմ, Աստուած զիտէ: Ուրախ եմ որ մասամբ հասկցած եմ Աստուծոյ կամքը իմ կեանքիս մասին, փափաքս այն է որ լման հասկնամ: Երկու կողմերս շատ հիւանդներ կան, ոմանք հայհոյանքներով, ոմանք տեսակ տեսակ մեղքերով եւ անհաւատութիւններով լեցուն եւ տեսական արտունջի մէջ: Ինծի կը հարցնեն, զոնք երբեք չե՞ս խորհիր ընտանիքիդ եւ հիւանդութեանդ մասին որ խաղաղ սիրտ ունիս. ուրիմն զուն այս հիւանդանոցի կեանքը աւելի կը սիրես քան առաջուան կեանքդ (.), մինչդեռ իմ միտքով թեւեւս պատճառը սրտիս մէջ եղած խաղաղութիւնն է, կիսս եւ զաւակներս Աստուծոյ հոգատարութեան ներքեւ: Փառք ըլլայ իր սուրբ անուան, ոչ միայն 20 ամիսէ ի վեր զանոնք կը կերակրէ, այլ իմ բոլոր կեանքիս մէջ Աստուծոյ շատ մեծ օրհնութիւնները վայելած եմ, մանաւանդ վերջին քսան ամիսներէ ի վեր անուրանալի կերպով Աստուած իր զաւակներուն միջոցաւ ցուցուցած է իր կարողութիւնները: Փառք իր անուան:

Աղօթքներուդ կարօտ Աստուծոյ մէկ տկար զաւակը՝

Կ. Զ.

ՄՈՒՏԻՆ ԵԹԷ ՏԷՐԸ ԿՍՄԻ, ԳԵՂԵՑԻԿ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՊԱՏՐԱՍՏ ԿՐԼԼԱՅ 20 ՄԱՅԻՍԻՆ ԳԵՂԵՑԻԿ ԳՐԳՈՅԿ ՄԸ ԵՂԱԻ: ԱՊՍՊՐԱՆՔՆԵՐ ԴԵՌ ԿՐԼԵՆՈՒՆՈՒՆ: